МОСК. АРМЯНСК. ОБЩ.

ՍԱՍՄԱՑ ՓԱՀԼԻՒԱՆՆԵՐ

ԿԱՄ

ԹՐԼՕՐ — ԴԱՒԻԹ ԵՒ ՄՀԵՐ

ՀԱՅ-ՓՈՂՈՎՐԴԻՍԿԱՆ ԳԻՒՑԱԶՆԱԿԱՆ ՎԷՊ ՆՈՐ ՎԷՐԻՆՑ

ՄՈՎՍԷՍ ԲԱՐԲԱՌՈՎ

ԳՐԻ ԱՌԱՒ

Բ. ԽԱԼԱԹԵԱՆՑ։

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

1899

891.99
Խ-17

19 NOV 2011
№ 2/53/

ՍԱՍՄԱՑ

ՓԱՀԼԻՒԱՆՆԵՐ

ԿԱՄ

ԹԸԼՕՐ — ԴԱՒԻԹ ԵՒ ՄՀԵՐ

ՀԱՅ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳԻՒՑԱԶՆԱԿԱՆ ՎԷՊ ՆՈՐ ՎԵՐԻՄՆՈՏ

ՄՈՎՍԷՍ ԲԱՐԲԱՌՈՎ

ԳՐԻ ԱՌԱՒ

Բ. ԽԱՂԱԹԵԱՆՑ։

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ Ս. ԷՄԻԱՆԻ
1899

Дозволено цензурою 12 Января 1899 г. г. Тифлисъ.

Гос. Публ. Библиотека
СССР
им. А. Мясникова
г. Ленинград
46
42.

ՊՈՊՈՎԻՉՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ • ՄՈՍԿՎԱ •

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ.

Վերջին դարս՝ մեր մտաւոր կեանքի բեղմնաւոր՝ պէս պէս երեւոյթների շարքում՝ առաջ է բերել եւ մշակել մի կարեւոր խնդիր՝ որ երկար ժամանակ մոռացման էր տրուած՝ իբրեւ լուրջ ուսումնասիրութեան՝ նոյն իսկ հետաքրքրութեան անարժան նիւթ։ այդ ժողովրդի հոգեւոր եւ մտաւոր ոյժերի արդիւնքն է արտայայտուած խօսքով՝ որ անուանում՝ ենք բանաւոր կամ ժողովրդական գրականութիւն՝ իւր բազմատեսակ ճիւղերով։ Այն՝ ինչ որ շարունակ ամբողջ դարեր արհամարհուած էր եւ անտեղի դատապարտուած՝ շնորհիւ մի շարք անձնուէր քանասէրների՝ սկզբում՝ Գերմանիայում՝ եւ ապա Ռուսաստանում՝ սկսուեց ժողովուել ամենայն խնամքով եւ անսպառ եռանդով։ Կարճ միջոցում՝ երեւան եկան ամենահարուստ տեղեկութիւններ ժողովրդի ոչ միայն քանահիւսութեան՝ այլ եւ նորա ըմբռների՝ հաւատքի՝ տեսակ տեսակ սովորութիւնների եւ կենցաղի մասին։ ստեղծուեց մի նոր գիտութիւն կամ աւելի ճիշտն՝ գիտութեան մի նոր ճիւղ — ազգագրութիւն (éthnographie)— որ՝ մի կողմից աշակցելով պատմութեանը՝ միւս կողմից խլեց ժամանակի կորստաբեր ազդեցութիւնից մի ահագին ազգագրական պաշար՝ արժանի բազմակողմանի ուսումնասիրութեան։

Վերջինս չը յապաղեց երեւան գալ ի դէմս բազմաթիւ մասնագէտների՝ որոնք հաւաքած նիւթը ենթարկեցին լուրջ քննութեան՝ առնաջ բերելով յաջող

եւ շատ անգամ՝ տաղանդաւոր մեկնութիւններ, կապ որոնելով ժողովրդի կրօնական, ընտանեկան եւ հասարակական կեանքի երեւոյթների մէջ, միով բանիւ՝ պարզելով նորա աշխարհայեցողութիւնը, սկսած նորա գոյութեան ամենահին ժամանակներից։ Ս՛օտ ծանօթանալով քննելի առարկայի հետ, նոքա խնդիր յարուցին զանազան ազգերին պատկանող աւանդութիւնների եւ սովորութիւնների ազգակցութեան մասին, այսպիսով նիւթին տալով նոր լուսաբանութիւն։

Մեր խօսքը սահմանափակում՝ ենք ժողովրդական զրականութեամբ։

Մենք ընաւ չենք կարող զանգատուել մեր ազգային աւանդութիւնների աղքատութեան վերայ, քանի որ դեռ սկսած քառասնական թուականներից մեզ մօտ լոյս են տեսել եւ զանազան հանդէսների (Բազմավէպ, Արծուի վասպուրական, Արեւելեան Մամուլ, Կռունկ, Արարատ, նորերս՝ Լումայ, Բիւրակն եւ այլն) եւ պարբերական թերթերի էջերում՝ որպէս եւ առանձին գրքոյկներով բազմատեսակ ժողովրդական նիւթեր, երբեմն շատ հետաքրքիր եւ գեղեցիկ իրանց արտաքին ձեւով։

Վերջին ժամանակների փորձերը ցոյց են տալիս, թէ որչափ հարուստ գանձ է թաղուած ժողովրդի յիշողութեան մէջ, որչափ նա մեծ եւ հետաքրքիր պաշար կարող է մատակարարել եռանդուն ընտանասէրն։ արժանայիշատակ Հ. Սրուանձտեանցի «Սասունցի Դաւթի» զրականական ասպարէզ գալը արդէն մի խոշոր երեւոյթ էր մեր ընտանեաց աւանդութիւնների շարքում՝ որ առաջինը ծանօթացրեց մեզ ժողովրդի մէջ ապրող դիւրազգնական վէպի հետ։ Զարգացած հետաքրքրութիւնը, որ միշտ զօրեղ գործիչ է հանդիսացել ամենուրեք, այնուհետեւ երեւան հանեց մի շարք նոյն վէպի

վարիանտները՝ նախ պ. Մ. Աբեղեանի գրի առած «Դաւիթը եւ Մհերը» (1889 թ.) եւ ապա արժ. Դարեգին սարկաւագի «Սասնայ ծռեր» վերնագրով երկու նոր վարիանտները (1892 թ.)։ Որքան մեզ տեղեկացրել են՝ այս այն քանահատաքի մօտ անտիպ են մնում՝ դեռ շատ նոյն տեսակի «նաղլները»։

Այս աշխատանը մեզ աջողեցաւ գրի առնել Էջմիածնում՝ Դաւթի եւ Մհերի մի նոր եւ բաւական հարուստ վարիանտ՝ որ չորրորդը պիտի համարուի։ Այստեղի պայմանները ինձ պարզ ցոյց տուին՝ թէ որչափ դիւրին է ձեռք բերել այդ տեսակ նիւթեր՝ որոնք գուցէ մի քանի տասնեակ տարուց յետոյ այլ եւս գոյութիւն չունենան *)։ Դժուար չէ նմանապէս ուսումնասիրել մի կարեւոր խնդիր՝ արդեօք ինչ պայմանների մէջ են ապրում՝ այս աւանդութիւնները ժողովրդի բերանում՝ մի խնդիր՝ որ բնաւ չէ հետաքրքրել մեր բանասէրներին։

Երկու տող մեր վարիանտների մասին։

Լոյս ընծայելով Դաւիթ Սասունցու եւ Մհերի մեր գրի առած վարիանտները մենք ի նկատի ենք ունեցել նախ այն հանգամանքը՝ որ սոքա՝ ըստ բովանդակութեան՝ ամենաբնորոշակն են համարիանում՝ մեզ ծանօթ վարիանտների շարքում՝ լրացնելով վերջիններիս պակասը՝ պարզելով շատ տեղեր եւ կապելով այն՝ ինչ որ մինչեւ այժմ հատ ու կտոր էր երեւում՝ մեզ։ Երկրորդ՝ այստեղ զգալի կերպով նկատելի են մի քանի էական տարբերութիւններ պ. Աբեղեանի գրի առած նոյն տեսակ վարիանտներից **) (մանաւանդ Մհերի

*) Ծանօթութիւն. Մենք գրի առած ունենք եւ մի քանի նոր վարիանտներ՝ որոնք կը մտնեն մեր ժողովածուի մէջ։

**) „Դաւիթ եւ Մհեր“՝ գրի առաւ Մ. Աբեղեան. Շուշի՝ 1889 թ. Այժմ սպառուած է։

ճիւղում)։ Վերջապէս՝ հետաքրքիր էր եւ այն եւս, որ մեզ պատմողը—Մոկացի Զատիկը—պ. Աբեղեանի «նաղրլ ասողի»—նոյն գիւղի բնակչի Եսիսոյի—ուսուցիչն է եղել, ուստի եւ ապասելի էր նորանից աւելի ճիշտ եւ լայնածաւալ «նաղրլ»։ Մեր ապասելիքը ի դերեւ չելան։

Կարեւոր ենք համարում այստեղ նկատել, որ ընթերցանութեան համար յարմար դատեցինք մեր վարիանտը ոտանաւորի ձեւով շարել, մանաւանդ որ իւրաքանչիւր տողում լրանում է մի միտք եւ բացի այդ կան ամբողջ հատուածներ, որտեղ պարզ լսելի է չափը։

Մենք աշխատել ենք, որչափ հնարաւոր էր, ամենայն ճշգրտութեամբ արտայայտել մոկաց բարբառի հնչիւնները այնպէս, ինչպէս մենք լսել ենք Զատիկից, թէպէտեւ նկատելու է, որ նախ այդ հնչիւնները մասամբ հաստատուն չեն, ենթարկուելով տեղ տեղ փոփոխումների (էսաց—ասաց, էլնը—իլնը եւ այլն)։ Մենք յարմար ենք դատել այդ փոփոխ հնչիւններին մի ձեւ տալ։ Երկրորդ՝ ի նկատի առնելով Զատիկի երկարամեայ պանդխտութիւնը Պոլսում, մենք չենք վստահանում պնդել, որ այստեղ պահպանուած լինէին Մոկաց բարբառին յատուկ ճշգրտիւնները։

Մեր ընտրած վերնագիրը վարիանտի համար արտայայտում է ժողովրդի [illegible] իւր հերոսների վերայ, որոնք, օժտուած լինելով անասելի ֆիզիկական ոյժով, կազմում են «փահլիվանների» մի առանձին ցեղ *)։ Այսպիսով, եթէ մենք չենք սխալւում՝ այս բառը, անշուշտ առաջացած լինելով «պահլաւ» անունից, հնուց

*) Ծանօթութիւն։ Այսպիսի նշանակութեամբ բառս գործածուած է պ. Աբեղեանի և մանաւանդ արժ. Գարեգին սարկաւագի վարիանտներում։

ի վեր ունեցել է ժողովրդի ընթանում՝ իր որոշ նշանակութիւնը (որը շատ մօտ է ռուս. богатырь=սանսկրիտ. bhagadhara—Բաղդաս-ուր, Բաղդով օժտուած բառին *)։

Բայց բաւական չէ զրի առնել այս այն աւանդութիւնը. որչափ էլ հարուստ տեղեկութիւններ քաղենք մեր ժողովրդական զրականութեան մասին, այս գործունէութիւնը կորցնում է իր նշանակութիւնը եւ խորհուրդը, եթէ չէ զոհացնում երկու պահանջների՝ նախ եթէ հաւաքած նիւթը մատչելի չէ կարդացող հասարակութեանը կամ՝ զէթ ժողովրդական զրականութեան սիրողներին. երկրորդ՝ եթէ նա մնում է իբրեւ հում նիւթ, առանց գիտական եզրակացութիւնների։ Այս երկու պայմաններին զոհացում՝ տալու համար մեզ պէտք են որոշ ծրագրով կազմուած ԺՈՂՎԱԾՈՒՆԷՔ, որոնք ամփոփէին իրանց մէջ զանազան տեղեր ցրուած, տրոհուած եւ անտիպ, «նաղըլներ» **), հեքեաթներ, երգեր, առակներ եւ այլն, եւ ապա մատնանշէին նրանց լուրջ ուսումնասիրութիւնը։

---

*) Մանր. Մինչեւ այժմ ժողովրդի մէջ գոյութիւն ունեցող ըմբռիշները նոյն անունն են կրում. մենք կարծում ենք, որ այստեղից է առաջացել բառիս մեր նշանակութիւնը՝ իբրեւ լարախաղացի, որ նախ քան սոսկարէր դուրս գալն սովորաբար երկար տարիներ պատ է պահում և ապա ուխտ դնում ս. Կարապետ, որի դերեզմանի վերայ խընդրում է երան շնորհք պարգեւել։

**) Մանր. «Նաղըլը», ժողովրդի տեսակէտով, ճշգրիտ անցքի պատմութիւն է (=ռուս. „быль“ կամ „былина“), որով և զանազանւում է հեքեաթից, իբրեւ ճշմարտութիւնից դուրկ աւանդութիւնից։ Այս տեսակ «նաղըլներ» (որոնց թիւը սակաւ չէ), երբեմն կապ ունենալով մեր նախնեաց և ընդհանուր պատմութեան հետ, անշուշտ ներկայացնում են մեծ հետաքրքրութիւն ուսումնասիրութեան համար, ուստի և հաւաքուելու են ամենայն խնամքով։

Աւելորդ չենք համարում հաղորդել ի լուր հայ ժողովրդական բանահիւսութեան սիրողների, որ մենք դիտաւորութիւն ունենք ամենամօտ ապագայում մի ժողովածուի մէջ ամփոփել մեր ժողովրդական դիւցազնական վէպի վարիանտները, որոնք զանազան ժամանակ եւ զանազան հանդէսների էջերում կամ առանձին հրատարակութամբ լոյս են տեսել «Սասունցի Դաւիթ», «Սասմայ ծռեր», «Դաւիթ եւ Մհեր» եւ այլ վերնագրերով։ Մենք անչափ շնորհակալ կ'լինէինք այն բանահաւաքներից, որոնք կ'բարեհաճէին մեզ ուղղել իրանց ձեռքի տակ ունեցած վերոյիշեալ անդէպ վարիանտները ժողովածուն հարստացնելու եւ լրացնելու համար։

Միայն այն ժամանակ, երբ մենք ամփոփ կունենանք աչքի առաջեւ մեր ժողովրդական դիւցազնական վէպի վարիանտները (գէթ նորա մեծ մասը), ցրուած այստեղ եւ այնտեղ, երբ վերջիններս դասակարգած կ'լինեն ըստ նիւթին, եւ մենք աւելի հարուստ տեղեկութիւններ կունենանք սոցա ժողովրդի մէջ գոյութեան պայմանների մասին, այն ժամանակ միայն կարելի կլինի ձեռնարկել վէպիս լուրջ ուսումնասիրութեան, որի կարեւորութիւնը մեզանում շատ զգալի է։

Բ. Խ.

1 Նոյեմբերի 1898 ամի
Ս. Էջմիածին։

ԽԱՊՈՑԵՆՑ տնից ՋԱՏԻԿԸ մօտ 50 տարեկան, միջակ հասակի ազամարդ է, դեռ բոլորովին առոյգ դէմքով, լայն կրծքով և կլոր երեսով, ծածկուած սև կոշտ մազերով. արծուի քիթը տալիս է նորան վեհանձն և համարձակ արտայայտութիւն։ Ձնայելով տարիքին, նորա գլխի մազերը, կարճ մօրուքը և պայտաձև բեղերը գրեթէ դեռ բոլորովին սև են. ընդհանրապէս նորա տեսքը առողջութեան և ամուր կազմուածքի տպաւորութիւն է թողնում։ Նորա հայրենիքն է Մոկաց (կամ Մոկս, ինչպէս ինքն է անուանում) գաւառի Դիլեկանց գիւղը. գլխաւոր պարապմունքն է եղել—գաշտային աշխատանք և կտաւագործութիւն։ Դաւթի «Նաղլը» և ուրիշ շատ հեքեաթներ նա սովորել է տասնըհինգ տարեկան հասակում նոյն գիւղի բնակիչ Գրիգորից, որը այն ժամանակ արդէն ծեր էր և որը մի անգամ եղել է Պօլսում։ Ջատիկը էս քսան տարեկան հասակից կրել է երկարամեայ պանդխտութիւն, երեք անգամ բաղդ որոնելով Պօլսում, որտեղ նա անց է կացրել նախ 3, ապա 2 և վերջապէս ամբողջ 8 տարի, բանելով Ջրաղացում։ Վերջին 4 տարին նա անց է կացրել հայրենի գիւղում, որտեղից նա եկել է Էջմիածին 1898 թ. զատկին։ Այժմ նա Ծառայի պաշտօն է վարում Գէորգեան ճեմարանում—Մեր գրի առած վարիանտները կրկնել ենք տուել երեք անգամ և երեք անգամ էլ Ջատիկը պատմել է բառացի, առանց նկատելի փոփոխութիւնների։ Բացի այս «Նաղլից» նա գիտէ ուրիշ շատ հեքեաթներ, որոնք նմանապէս մենք գրի ենք առել։

ՄԻ ՔԱՆԻ ՀՆՉԻՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՆՇԱՆՆԵՐԸ։

բ՞	[illegible] է (գրեթէ=ե)։
ք՞, *գ՞*, *ն՞*	[illegible] ։, [illegible], [illegible]։
ա՞	[illegible] ա։

ԹԱԼՕՐ—ԴԱՒԹ

Դառնամ զողորմին տամ Մելքսեթ քահանին
Դառնամ զողորմին տամ Սանասարին
Դառնամ զողորմին տամ Բաղդասարին
Դառնամ զողորմին տամ Մհերին
Դառնամ զողորմին տամ Թբռլան Դաւթին
Դառնամ զողորմին տամ Զինեով Յեսոփանին
Դառնամ զողորմին տամ Յրան Վերգեսոն
Դառնամ զողորմին տամ Պարոն Աստղին *)
Դառնամ զողորմին տամ ականջ էրոզի խօր մոր խոսգիւն [1]:

Ա.

Մհեր Մսրամելիք՝ դասաբրայ ին:
Մսրամելիք մեռաւ:
Մսրամելքի կնիկ խրկից յետև Մհերին, էսաց՝
—Գնաս ստեղ, իմ բեհն [3] քիւ խիա [2] իլնը.
Մհեր էսաց՝ տ'երթամ: [4] Մհերի կնիկ էսաց՝ մ'երթա
Մհեր էսաց տ'երթամ: Մհերի կնիկ էսաց՝ մ'երթա.
Ան այլազգ ի՝ տիւն էրթաս տ'խառնուիս ըզան [5]:

---

1) Ընդ է 2) հետ:

3) Բեհ—նշան. շունչ՝ շունչը քեզ հետ գուրս գայ, այսինքն՝ սիրաս հովանայ:

4) տ՝ մասնիկը հաւատաբ է մեր կ'մասնիկին:

5) Նորա հետ:

*) Ծանօթ. Այս մի շարք հերոսների անունները, որոնց յետևատակին ողորմի է տալիս պատմողը («ասողը»), ցարդ շրջում են ժողովրդի մէջ. մեզ պատմել են և մենք մատամբ սատուգել ենք, որ ոսոյանից ամեն մէկը ունի իւր առանձին վարիանտը, որոնցից ամենատարածուածներն են Դաւթինը և վոքր Մհերինը:

Մհեր էսաց՝ ա՛ երթամ։
Կնիկ էսաց՝ ախ էրթաս
Մինչիւ քեռասուն տարի ախ իմ գեղվէնք ա՛չգեաս։
Մհեր գնաց Մսրամելքի կնկեան մօտ։
Խառուտ զկնիկ, կնիկ էլաւ ագեով։
Ցզէմ էլաւ, անուն իգի Մսրամելիք՝։
Ցիւրիշի աղէներ տարէ կ՚ջիւջանեն [1]),
Մսրամելիք՝ օրէ կ՚ջիւջանէր։ Ֆէրրգէ [2]) ազայ էր։
Մսրամելիք՝ ջիւջացաւ, Ֆուայ էլաւ։
Մսրայ տեղ զանֆթ էրաւ [3])։
Մհեր մոտածից՝ իս տանկու ճրաղ վառիցի։
Խայուն ընցրցի։
Մհեր Մսրայ տեղէն էլաւ էկաւ Սասմայ տեղ։
Կնկեան էսաց՝ կնիկ, իս տանկու ճրաղ վառիցի։
Խայու ճրաղ ընցրցի։
Թողնիս իս գեամ քիւ գեղվէնք։
Բալքի Աստուած մի [4]) զաւակմ տայ։
Խայու ճրաղ չընցնի։
Կնիկ էսաց՝ իս ահա [5]) իմ էրի
Զուր [6]) քեռասուն տարի տիւ իմ գեղվէնք ա՛չգեաս։
Մհեր էսաց՝ տարիմ գիշիր խսարինք [7])
Մէկ ցերեկ խսարինք
Քեռասուն տարին լրմանայ
Իս գեամ քիւ գեղվէնք։
Տարիմ գիշիր խսարիցին
Մէկ ցերեկ խսարիցին
Քեռասուն տարին լրմայրցին։
Կնիկ էսաց՝ տիւ գեաս իմ գեղվէնք
Աստուած մի զաւակմ տայ

---

1) մեծանան 2) կարէչ 3) տիրեց։
4) մեղ 5) ուխտ 6) մինչև
7) հաշուենք

Իս էլ՝ տիւ էլ տ'մեռնինք
Մեր տղէն տ'կենայ վըր ցըղին [1]։
Մհեր էսաց՝ թըղ իլնը՝ թըղ կենայ վըր ցըղին՝
40 Մէկ տիրոդմ տ'իլնը մեր տղին։
Մ'հեր գնաց կնկեան դեռզվէնք
Կնիկ էլաւ աղեռվ։
Ին օր՝ ին ամիս լըմնցաւ՝ Մ'հեր էսաց խրօղքեօր՝
—Զէնեռվ Ցեռվան՝ մի զաւակմ տիլնը՝
Միր զաւակի անուն դնէք՝ Դաւիթ.
Միր զաւակն էլ տանէք՝ Մսրամելքի կնիկ տիրը.
Մինք էրկուսն էլ տ'մեռնինք։
Տղէմ էլաւ՝ Մ'հերն էլ՝ կնիկն էլ մեռան։
Զէնեռվ Ցեռվան տղի անուն իդի Դաւիթ.
50 Տղէն առից՝ իդի թօրբէն [2]՝ էթալ թիւ՝
Տիկմ մեզը՝ մէկ կարագ՝ էբարձ՝
ղԴաւիթ առից դնաց Մսրայ քաղաք՝
Տարաւ Մսրամելքի կնկեայ մօտ.
Մսրամելքի կնկեան էսաց՝
—Աս Մ'հերի տղէն ի՝ կ'տիրիս՝ *)
Զէնեռվ Ցեռվան զարձաւ էկաւ տուն։

Բ.

Մսրամելքի կնիկ զԴաւիթ տիրից.
Դաւիթ ջիւջացաւ՝ ֆռայ էլաւ։ [3])
Օրէն մէկ մօր էսաց՝

---

[1]) Ցօղ բառիցն է (=ցորնի կոթ)՝ այստեղ նշանակում է՝ որը կ'մնայ։

[2]) Հանապարհորդական պայուսակ՝ խուրջին։

[3]) Ազատացաւ։

*) Ծանօր. Մեծ Մ'հերի (Դաւթի հօր) մասին բնաւ չէ յիշում Նախօն՝ այլ ուղիղ սկսում է Դաւթից։

60 —Մսրամելիք՝ կերթայ յեղէ [1]) կ'խաղայ,
Ըզզի էլ տանը ուր խիտ, իս թամաշայ էնիմ։
Մսրամելքի մէր Մսրամելքին էսաց՝
—զԴաւիթն էլ տար խաքի [2]) թամաշայ էնի։
Մսրամելիք՝ էսաց՝ չըմ տանի,
Տանիմ՝ յեղ դի՛պնը, սպանը։
Մեր էսաց՝ հեռու տեղ դի,
Տիւ յեղէ խաղցէք՝,
Դաւիթ թամաշայ էնի։
Մսրամելիք Դաւիթ առից գնաց,
70 զԴաւիթ հեռու տեղ իդի,
Երկու Ֆէրըզ [3]) իդի պահացող՝
Զ'երթայ քեսրըմ՝ վե ինկնը տակ, մեռնի։
Մսրամելիք՝ առից մարդիր
Գնաց յեղու տեղ, յեղէ խաղաց։
Դաւիթ ընցկում [4]) իրիշից, բամ՝ չ'տեսաւ,
Ըռբկաւ [5]), անտեղէն իրի։
Երկու Ֆէրըզ կախուտն Դաւթի մընէ,
Դաւիթ չ'կրցան զանթիթ էնեն։
Դաւիթ երկու Ֆէրըզ վար քինթ բերնի քէշից
80 Մ'ընչի տուն իրի։
Դաւիթ ըռբկաւ, գլեոխ իդի գեաթ'ն,
Գառկաւ անտեղ։
Մսրամելքի մէր էսաց՝
Ընչու ըռբկար էկիր։
Էսաց՝ Մսրամելիք՝ ըզզի տարաւ

---

[1]) Թաղիսցց գնատակ, որը նեռում են „քաշեոլի" (փայտի) հարուածով։

[2]) Քեզ հետ [3]) Կարիչ

[4]) Ուրչատի [5]) Նեղացաւ

Զաա [1]) անտեղ իգի՝ իս բամ չ՚տեսայ
Սաղի ձէն կուգէր [2])՝
Ոս ընցկում իրիշիցի
Բամ չ՚տեսայ՝ իս էլ իկը։
90 Մսրամելքի մէր բռբկաւ։
Ցիրկուն Մսրամելիք՝ իրի՝
Մսրամելքի մէր յէռջիւ չ՚կայնաւ՝
Ըռբկէր էր՝ նստեր էր անտեղ։
Մսրամելիք՝ էսաց՝—տիւ ընչու՞ ըռբկեր իս
Նստեր իս ադաեղ՝
Զըսկայնէ իլնը յէռջիւ ձի [3])։
Էսաց՝ ընչու՞ խամար ղԴաւիթ չ՚տարար յեոլը տեղ թա-
մաշայ էներ։
Էսաց՝ մարէ՝ ան կառամաժի [4]) ադգէ ի՝
Ոսօք մարկ չ՚էնի՝ յեոլ դպնի՞ սպանի։
100 Ցի՝ ուրիշ մարդիր ա՚սին՝
Էլաւ խացի կերող
Մսրամելիք՝ իրեն խաց ապով [5]) էտու սպանիլ։
Զի ամօթ է իմ մարդիրու մընէ [6])։
Առաւօտուն կ՚ատանիմ։
Առաւօտուն Մսրամելիք՝ յէլաւ՝ Դաւիթ առից
Գնացին յեոլի տեղ։
Ցեոլի քեար եօթը գեաղ խրոնդկացեր իր [7])։
Դաւիթ գնաց մնաւ յեոլ տուն։
Ինչ էրին՝ Դաւիթ տիւս չելաւ։
110 Մսրամելիք՝ ըռբկաւ՝ էսաց՝
—Ցեոլ զարկեցէք՝ թըլ գեայ սպանի։

---

1) Առանձին

2) Զատիկի ասելով՝ խաղի ժամանակ նուագում էին աշուղները։

3) ձի—լինձ

4) Ցամաք 5) Հացի համար 6) Ամօթ։

7) Խորացել էր

Հիփ իլի՝ արլնէ ձի գլխացաւանք։
Յեղ վիրուց՝ զարկիցին՝ էկաւ.
Դաւիթ ձեռ իտու՝ զյեղ բռնից՝
Էզարկ՝ էսաց՝—յեղ՝ սաջար [1]) յեղ.
Էրկու խարիր մարդ յէոջիւ յեղլին սպանից։
Մ՝սրամելիք թուր քէշից իրի զԴաւիթ ա՝սպանէր՝
Մ՝արդիր էկին յառաջ՝ չ՝թողին՝
Ըսրցին՝ անիկ ապտի ի՝ բան չ՝գիտաւ։ *)
120 Դաւիթ յեղ—արնէն յէլաւ՝
Մ՝ընչիւ տուն չ՝կայնաւ։
Մ՝սրամելիք՝ մարդէն էրաւ [2])
Ցիրիկուան տուն էկաւ՝
Մ՝էր էսաց՝ ընչո՞ւ խամար մարդէն էրիր իս։
Էսաց մարէ՝ իս քի ըսրցի
Դաւիթ չըմ տանը իմ խիտ.
Ըսրցի՝ ան կառամաժի ապտէ ի
Խօսք մարիկ չէնի. տարայ խիտ՝
Մ՝քաւ յեղ տուն.
130 Ինչդ էրը՝ տիւս չեկաւ.
Ես էլ ասը՝ յեղ զարկեցէք՝
Թրը գեայ սպանի։
Ցեղ բռնից՝ էթալ՝
Էրկու խարիր մարդ յէոջիւ սպանից.
Ես իմ մարդերուց ամչրցայ՝
Մ՝էր էսաց՝ վուրդի՝ ան ապայ ի՝
Ան բանիր չի գիտի։
Էսաց՝ մարէ՝ տիւ կրսիս՝ ապայ ի՝
Խելք բան չի կրտրի.

---

1) Քրդերէն բառ է՝ նշանակում է՝ հարիւր անդամ (կարմուած է սայ=100 և ջար՝ անդամբառ երից)։

2) Տեսաւ զէմը ընդունեց

*) Իմաստ. Նախօրի պատմելում Դաւիթ «ձեռ եառաւ զէնոր (Մսրամելքի) գեղջ բռնեց»։

140 Սինիմ ոսկի, մէկ կրակ լից, դի յառաջ.
Մը հինք՝ [1]) ձեռ տրտայ դախ [2]) ոսկին թէ դախ կրակ.
Թէ ձեռ իտու դախ կրակ՝ ախմար ի.
Թէ ձեռ իտու դախ ոսկին՝
Հար ի, ա՛զարկիմ սպանիմ։
Սինիմ ոսկի, մէկ կրակ լցին
Դրին Դաւիթի յառաջ.
Դաւիթ մատ պարդից դախ ոսկին.
Հրիշտակ երկնուց իջաւ, մատ կանիցց,
Տարաւ իդի վրը կրակին.
150 Կրակ կպաւ մատ, մատ իդի վար լեղուին,
Լեղուն իրիցաւ, էլաւ թըլոր [3]) Դաւիթ։

Գ.

Մարամելքի սի՛րտ չ՚տաքցաւ վերէն.
Էսաց՝ մարէ, Դաւիթ ա՛սպանիմ։
Մ՚էր էսաց՝ ուրդի, մը՛սպանի,
Անու մեղք քիւ վիզ մի՛ ձգը,
Ցեսրոդկը [4]) թըզ երթայ ուր խօր քեսդաք։
Մարամելքի՝ յէլաւ, երկու Փէրըզ իրի անտեղ
Էսաց՝ զԴաւիթ կ՚տանէք՝ Բաթմանայ [5]) կարմնջի վերէն,
Զինեցէ՛ք [6]), կուժըմ անու ալրնէն առէ՛ք իրէրք՝
160 Ես խմիմ իմ սի՛րտ խովանայ։

Էրկու Փէրըզ առին Դաւիթ տարան.
Դաւիթ կընկնէր սար ձիւր յիտիւ հաւքիրուն,
Ցիտիւ ջանաւարնիրուն,
Մ՚ընչիւ յիրիկուն կան կ՚գէր [7])։

---

1) Նայենք։ 2) Դէպն։
3) Թլուատ։ 4) Ուզարկիր։
5) Բաթման—գեա է Ատուանի մօտ։
6) Մարթեցէ՛ք։ 7) Մանկուդար, կ՚զբօսնէր։

Շաբաթմ էրկու գնացին,
Օրըմ չըսըցին՝ ախ Դաւիթ, ախ նեղացիր իս,
Տիւ ծարաւ իս, տիւ անօթի իս.
Օրըմ չի խարցըցին։
Գնացին Բաթմանայ կարմնջին մօտացան,
170 Կանչիցին՝ Դաւիթ, յէրի էրթանք.
Դաւիթ էսաց՝ Աստուած խէր էնը,
Ասիկ էրկու շաբաթ կայ կը գեանք,
Օրմ ձի չեն կանչը,
Ասօր ընչու խամար կ'կանչին։
Դաւիթ գնաց ֆէրըզքերու մօտ,
Էսաց՝ Աստուած խէր էնը,
Աս քեանի օր կայ կուգեանք
Տիւք ձի չէք՝ կանչի, չէք՝ ըսի՝
Տիւ անօթի իս, տիւ ծարաւ իս, տիւ նեղացիր իս,
180 Ասօր տիւք ինչ ձի կ'կանչէք։
— Քիւ խօր քեաղքին մօտ խասանք,
Տանին՝ քիւ խրօղբեօր թասլիմ էնին՝ [1])
Դառնանք գեանք մեն՝ ք։

Գնացին կարմնջի մօտ՝
Մէկ ընցաւ, մէկ մընաց Դաւթի յետիւ.
Դաւիթ էսաց՝ ընչու խամար մէկ կընցնէք՝ իմ յառաջ
Մէկ կմնէք՝ իմ յետև։
Ըսըցին՝ ընցկուն [2]) կենին՝ ք։
Տիւ չ'վախանաս կարմանջի վերէն։
190 Գնացին կէս կարմնջին՝
Մէկ յեռջևէն դարձաւ Դաւթի վերէն,
Մէկ յետուէն դարձաւ.
Դաւիթ էսաց՝ աա ինչ ա՝ենիք՝.

---

[1]) Ցանձնենք։
[2]) Այսպէս։

Դաւիթ ձեռմ էթալ անու փոդպատ,
Մէկ էթալ անու փոդպատ,
Տըտփէր յէրուր, թըլէր ջիւր.
Ասաց՝ տիւք չէք գիտը մարդ թըլի ջիւր,
Ես ձի նշանց տամ,
Տիւք նուրէն մարդ թըլցէք՝ ջիւր։
200 Էրկու ֆէրըզ ըսըցին՝
Ասաբծու սիրուն, տիւ զմի չրթլիս ջիւր.
Մսրամելիք՝ մի [1]) Էսաց՝
Տարէք՝ Բաթմանայ կարմնջի վերէն,
Դաւիթ զինեցէք՝, կուժմ անու էրընէն առէք՝,
Անու ջանդակ թըլցէք՝ ջիւր,
Արուն բերէք՝, իս խմիմ, իմ սի՛րտ խոշնայ.
Տիւ ադպէս մարդ իս,
Մենք էնենք մարդ կուզինք,
Աւալն [2]) էլ մենք քիւ խօր ֆէրըզներն ինք։
210 Դաւիթ առին գնացին տարան տուն։
Խրօղբէր տուն չէր,
Խրօղբեօր կնիկ չ՚ճանչցաւ.
Ասաց իտու կերաւ.
Դաւիթ չրխուսաւ մընչիւ յիրիկուն։
Ցիրիկուն խրօղբէր տուն էկաւ,
Գնաց Դաւթի գլեոն պադնէց,
Դաւթի վերէն խընդացաւ, ուրախացաւ։

Դ.

Մէկ ժամանակմ վերէն ընցաւ, խրօղբէր Էսաց՝
—Դաւիթ, ղքի էնիմ ուլարած,
220 Գնա՛ ուլիր տար էրըծ՝։
Զէնեով Ցեովան գնաց պոդվրտէ սօլ էտու կար։ [3])

---

[1]) Մեզ։
[2]) Ցառաջ։
[3]) Կարել։

Կոռըմ [1]) էլ էտու կոռիլ, առից իրի,
Առաւօտուն էտու Դաւթին.
Դաւթի սօլիր խագեաւ, կոռ բռնից ձեռ,
Ուլիր առից, տարաւ դաշտ։
Խրօղբէր էսաց՝ ուլիր տար դաշտ, էրըծա՛,
Մընչիւ իս քի խաց բիրիմ։
Դաւթի զուլիր առից գնաց դաշտ,
Ուլիր էրաւ դաշտ, ընկաւ սար ու ձիւր,
230 Ինչ ջանաւար կէր, ժողվից իրի ուլիրու մէջ էրաւ,
Ցէոջիւ կայնաւ։
Խրօղբէր խաց տարաւ, մօտացաւ.
Դաւթի էսաց՝ խրօղբէր, հեռու էրի,
Ուլիրու մօտ մի գեա, ուլիր կ՚փախին։
Խրօղբէր իրի ուլիրու մօտ, տեսաւ՝
Ինչ ջանաւար կէր, ամեն էլ բիրի
Ուլիրուն մէջն ի էրի։
Լպսարակ փախաւ, Դաւթի յընկեաւ յետուէն,
Տարաւ ան սար, իրի ան ձիւր,
240 Իրի ուլիրու մէջ էրաւ։
Խրօղբէր էսաց՝ էրի՛ խաց կի։
Դաւթի նստաւ խաց կերաւ, էսաց՝
—Խրօղբէր, նա սիւ ուլիր Աստուած օրհնի,
Նա բեոզ ուլիր Աստուած անիծի՛
Ըզգի շատ կ՚չարչարին, շատ կըփախին։
Խրօղբէր էսաց՝ ան բեոզ ուլիր թըզ էրիան.
Դաւթի էսաց՝ անու տէր ձնէ [2]) ուլ տ՚ուղը [3])
Ըզ ուլ չ՚կայ իս տամ անու տեղ,
Ես անու ջուհաբ [4]) ի՛նչդ տ՚տամ։
250 Ըէնեով Ցեովան դարձաւ էկաւ տուն։

---

1) Մահակ։ 4) Պատասխան։
2) Ինձնից։
3) Կ՚ուզէ։

Ցիրիկվան Դաւիթ ուլիր Ջանաւարնիր առից
Տարաւ էրաւ քեաղքի մէջ։
Սօլիր էնկանդար [1]) կարվեր ին, ըլեր ին ծընկնիր.
Կոռ մաշեր իր,
Մնացեր իր կոռատուն [2]), ընչ բռնիր իր։
Ինչան մարդիր գնացին մրա Զէնեով Ցեովան՝
—Տիւ նա ծուռ էրիրիս ուլարաց,
Ջանաւարնիր, ուլիր իրարուց չը ջոկի,
Զէնեով Ցեովան էսաց՝
260 —Առաւօտուն թըզ ուլիր չը տանի։
Զէնեով Ցեովան Դաւթին էսաց՝
—Ուլիր մը տանի, ուլիր գքի շատ կ՚տանջին.
Նախիր տար, էրա դաշտ,
Պառկի անտեղ, քընի,
Մընչիւ իս քի խաց կը բիրիմ։
Խրօղբէր գնաց, պողվրատ սօլմ էտու կար,
Պողվրատ կոռմ էտու կոռիլ,
Առից իրի, առաւօտուն Դաւթին խոտ։

Դաւիթ սօլ խաղեաւ, կոռ ձեռ բռնից,
270 Նախիր առից գնաց դաշտ։
Նախիր էրաւ դաշտ,
Դաւիթ ընկաւ սար ձիւր կան իրի,
Ինչկանդար առջ, գէլ պըլընգ [3]), առուծ,
Ինչկանդար ջանաւար կայ,
Ամեն էլ ժողվից իրի տաւարնիրու մէջ էրաւ։
Ջանաւարնիր Դաւթի հախուն [4]) կայնաց ին,
Տաւարնիր Ջանաւարնիրու հախուն կայնաց ին,
Դաւիթ յառաջ կայնիր ը։

---

[1]) Ցյնչափ։ [2]) Մահակի գլուխը։
[3]) Վագը։ [4]) Վախից, ահից։

Զէնեով Յեովան խաց տարաւ Դաւթին,
280 Իրիշէց տեսաւ՝ քեանիմ տաւար ին,
Ընցկուն էլ Ջանաւար բիրի լցի տաւրի մէջ,
Դաշտ լիք էրի։
Խրօղբէր տեսաւ, վախացաւ, կանչից՝
—Դաւիթ, էրի խաց տար կի,
Ծերացիր իմ, չըմ կէրի գեայ ադաեղ։
Դաւիթ էսաց՝ ահա՛ իմ խրօղբէր վախացաւ։
Դաւիթ գնաց խաց առից, իրի կերաւ.
Խրօղբէր դարձաւ, իրի տուն,
Խաբար էրաւ քեաղքին, էսաց՝
290 —Էլցէք՝ ձիր դռնիր շինեցէ՛ք՝
Դաւիթ ընցկուն Ջանաւար բիրի
Տաւրի մէջ լցի.
Գեան մընչ քեաղքին,
Քեաղաք՝ տ՛աւրին։
Յիրիկվան Դաւիթ առից տաւարնիր, Ջանաւարնիր,
Իրի քեաղքի մէջ իլից.
Տեսաւ՝ մարդ քեաղքի մէջ չ՛կայ.
Դաւիթ կանչից, էսաց՝
Էլցէք՝ ձիր դռնիր բացէք՝
300 Ձիր տաւարնիր տեղ էրէք՝.
Թէ մէկ էր, էրիր իմ տաս,
Թէ տաս էր, էրիր իմ քսան,
Թէ քսան էր, էրիր իմ քեառասուն։
Մ'էկ տիւս չ'ելաւ.
Էնկանդար կանչից, մարդ չ'տեսաւ.
Էսաց՝ կըլնէք՝, չիս [1]) բարեով չ'իլնէք՝։
Դաւիթն էլ ուր կեափանակ [2]) կործից ուր գլեսխ,
Պառկաւ անտեղ, քընաւ մընչիւ առաւօտուն։

---

[1]) Եթէ ոչ։

[2]) Վերարկու թագեսից։

Ինչ խարամ էր՝ գնացին, խալալ մնացին.
Իշխան մարդիր էլան Զէնեով Յեովանի մօտ գնացին՝
—Զէնեով Յեովան, տիւ գմի տաւրէ տ՚կարիս.
Տիւ ադ ծուռ կէնիս ուլարաձ,
Օրմ կէնիս նախրուրդ,
Ջանաւար տաւար իրարուց չ՚ճանչնայ;
Զէնեով Յեովան չ՚էթող տաւար տանէր.
Զէնեով Յեովան գնաց
Նիտ անեղ էտու շինիլ,
Իրի Դաւթին իտու, էսաց՝
—Դաւիթ, առ գնա՝ քի խամար նէձիր էրա [1]:
Դաւիթ առից գնաց պատուու կուրկի մէջ:

Ե.

Մ՚սրամելիք՝ գԿուզբադէն խրկից, էսաց՝
—Գնա՝ Սասմայ տեղ մի [2] խարջ առ էրի:
Կուզբադէն իրի Զէնեով Յեովանի մօտ
Ըսաց՝ Զէնեով Յեովան՝ քենէ կուզիմ՝
Քեառասուն անծին շիւշաք՝ [3] կուզիմ
Քեառասուն անծին էրինջ կուզիմ
Քեառասուն ըղտաբեռ ոսկի կուզիմ
Քեառասուն ազապ աղջիկ կուզիմ
Էրկանք ազան,
Քեառասուն յէրկէն կնիկ կուզիմ
Ուզտ բաառնան,

Պատաւ *) էլաւ գնաց կուրկին աչ կ՚տայ,
Տեսաւ՝ Դաւիթ կուրկի մէջ ինկի
Ամեն սըղդի [4] ուր խամար լիւր կ՚սպանի:

---

[1]) Արա՛ [2]) Մեր: [3]) Մաքի: [4]) Կոխատել, տրորել:

*) Ծանօր. Զատիկի ասելով, այս պատաւը Մհերի, Դաւթի հօր, սիրեկանն էր եղել:

Պառաւ Էսայ՝ գլեղոս քի տանը՝ թըլօր—Դաւիթ՝
Տիւ տըլնիս քիւ խօր տեղ
Ս՚ի վուռՃմ [1]) կարիս.
Իմ կուտ ադ փշուտ կուրիկն էր՝
Ան էլ տիւ վրը իմ կուտին կ՚տրեցիր։
Գնա՝ Կուղրադէն էկի՝
Քեռասուն անծին շիւշաք կ՚տանը՝
340 Քեռասուն անծին էրինջ կ՚տանը՝
Քեռասուն ադաղ աղջիկ կ՚տանը
Էրկանք ադան՝
Քեռասուն յէրկէն կնիկ կ՚տանը
Ուղտ բառնան.
Քեռասուն բղտաբեռ ոսկի կ՚տանը։
Դաւիթ Էսայ՝ պատաւ՝ մ՚բ՚ռըկի՝
Կերթամ՝ չըմ թողի քիւ աղջիկ տանին։

Դաւիթ դարձաւ էկաւ քեռաղաք՚.
Գնաց խիւաննիրու [2]) տիւռ էբաց *)՝ Էսայ՝
—Գնացէք՚ ձի խամար գեղոյ էրէք՚։ [3])
Գնաց աղչկտիրուն տիւռ էբաց՝ Էսայ՝
350 —Գնացէք՚ ձի խամար գեղոյ էրէք՚.
Գնաց կնքտիրու տիւռն էլ էբաց՝ Էսայ՝
—Տիւն էլ գնացէք՚ ձի խամար գեղոյ էրէք՚։
Էլաւ գնաց խրօղբեօր մօտ.
Տեսաւ՚ խրօղբէր չուքիր զարկիր գետին
Ոսկի կը չափէ. Էսայ՚
—Խրօղբէր՝ տիւ իլի վի՝
Տիւ չըս գիտի չափի՝

---

[1]) Օգուտ տալ։ [2]) Անասուններին։

*) Մանօր. Կուղրադէն տասանձին սենեակների մէջ վաճառել էր կանանց՝ աղջիկներանց և անասունները։

[3]) Խնդիր արէք՚ ինձ համար։

Ես կը չափիմ։
Խրօղբէր էլաւ վի՝ Դաւիթ նստաւ՝
360 Կոտ կործից՝ ոսկիք՝ կոտու տոտ վերէն իլից՝
Փէտ իտաւ՝ ոսկիք՝ էլից տակ՝
Դարտակ կոտ տարաւ Ջրտալ՝
Էսաց՝ մէկ՝ մէկ էլ չափից՝
Դարտակ կոտ տարաւ Ջրտալ՝
Էսաց՝ երկու։
Կուզբադէն էսաց՝ Զէնեով Ցեովան՝
Տիւ նա ծուռն իս նստուցի
Զի խամար մալ կ'չափի։
Դաւիթ էսաց՝ իս ծո՞ւռ իմ։
370 Կուզբադէն էսաց՝ տիւ ծուռ իս՝ ըր ի՞նչ իս՝
Ադ ծրռու բա՞ն ի տիւ կէնիս։
Էսաց՝ իս ծո՞ւռ իմ՝
Չկոտ ափից պատ՝
Կոտի կտուրքիր մէկէլ կոգմէն տիւս գնա՞ց՝
Էսաց՝ որ իս ծուռ իմ՝
Գնա՝ քիւ մարդիւն խաբար տու՝
Բա՞մ՝ քի խամար չկայ։
Կուզբադէն դարձաւ գնաց՝
Մսրամելքին էսաց՝
380 Տիւ ան ժամանակ Դաւիթ չ'ըսպանիցիր՝
Ասօր էլ քի խարջ չի տայ։

2.

Դաւիթ էսաց՝ խրօղբէր՝
Աստուած քիւ տուն տրէ՝
Էնկանդար ոսկի կէր մի՝
Տիւ ըզզի կէնէր ուլարած՝
Ըզզի կէնէր տաւրարած՝
Էնկանդար տիւ ըզզի տանջիցիր։

Զէնեով Յեովան Էսաց՝
—Դրեոդս քեզ տանի, թըլօր Դաւիթ,
390 Ան ոսկիք՝ Մ՝սրամելքի խամար իմ՝ պոխի,
Մ՝սրամելքի՝ գեայ, տանի ուր խարջ։
Դաւիթ էլաւ, նիա անեղ առիյ,
Գնաց ընկնաւ պառուս կուրկի մէջ,
Լիւր սպանից ուր խամար։
Պառաւ գնաց, Էսաց՝
—Դրեոդս դքեզ տանը, թըլօր Դաւիթ,
Տիւ իմ՝ կուրիկ ամէն սըղղեցիր,
Երկու տակ էր մնացէ՝
Ան էլ սըղղեցիր։
400 Իմ՝ ապրուստ ան կուրիկն էր։
Լիւր քի ի՞նչ օգուտ տ՝էղի.
Քիւ խօր նէձրատեղ կայ,
Գնա՝ քիւ խօր տէձրատեղ,
Նէձիր էրա, բի՝ կիր։
Յիրկուն Դաւիթ տուն էկաւ,
Էսաց՝ խրօղբէր, կերթաս կ՝թոմրխես [1])
Մարդ տեղ չերթայ,
Առաւօտուն նէձիր տ՝երթանք։
Զէնեով Յեովան գնաց, Էսաց՝
410 Դաւիթ կասը՝ մարդ տեղ չ՝երթէ՝ք՝,
Առաւօտուն նէձիր տ՝երթանք՝։
Առաւօտուն էլան, մարդիկ առին
Նէձիր գնացին։
Գնացին նէձրատեղ, բաղան [2]) բիւլիւրն [3]) էր,
Տիւռ վերէն։
Տիւռ բացին, նիրս մտան,
Ամէն մէկ ուր խամար բռնից։

---

[1]) Պատատուրեսս։
[2]) Պարկոպ։ [3]) Շուրջը։

Դաւիթ էսաց՝ ադպէս չ՚էղի,
Ադ եղսիր ին [1]), ատոնց միս չ՚ուտվը։
420 Ես տիւռ բանամ, տիւս էնիմ,
Որ կարիչ է, ուր խամար թրդ բռնի։
Դիշիր տիւս մնացին։
Զէնեով Յեովան իրի Դաւիթ իրեն կուշա պառկացուց,
Դաւթի կապի փէշ իրեն տակ իդիր,
Պառկաւ վիրէն։
Զէնեով Յեովան էսաց՝
Դաւիթ չէրթայ գիշիր
Ջեարմ թուփմ վէ էրթայ տակ մնոնի։
Դաւթի քուն չ՚տարաւ.
430 Էլաւ նստաւ, տեսաւ՝
Սարի գլեոխ կրակմ կէնին.
Դաւիթ էսաց՝ ես տ՚երթամ տեսնամ
Ան ով անտեղ կրակ կէնի։
Դաւիթ տ՚կանգնէր, տեսաւ՝
Փէշ խրօղբեօր տակն ի.
Զեռ էտու ջէր, գանակ էխան,
Էթալ փէշ կտրից,
Փէշ մնաց խրօղբեօր տակ։
Դաւիթ կանգնաւ, գնաց սարի գլեոխ.
440 Տեսաւ՝ քարի միջէն լիս կ՚էլնի.
Նիտ անեղով քարի բիւլիւր փուրից, նշանից,
Էլաւ էկաւ խրօղբեօր մօտ։
Տեսաւ՝ խրօղբէր քնուկ ի.
Նստաւ ուր տեղ, կանչից, էսաց՝
—Խրօղբէր, իլի վի, իլի վի,
Տես, էս սարի գլեոխ վով նա կրակ կէնի։
Խրօղբէր էլաւ նստաւ, էսաց՝

---

[1]) Գերի։

ՀԱՅ. ՍՍՌ. ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀՍՍՀ-ССР
Ա. Մասիսյան

Կրակ չին էնի անտեղ,
Ան քիւ խօր Մարութայ բանձր Աստուարածին ի։ *)
450 Մորամելիք՝ իրի քեակից,
Անու տեղ լիւս կիլնը։

Մընացին անտեղ մընչիւ առաւօտուն։
Առաւօտուն էլան նէճիր էրին տուն էկան։
Դաւիթ տուից էրկու իրիք ըղտարեա ոսկի,
Գնաց Մարութայ բանձրիկ Աստուարածին էտու շինիլ։
Ոդի յինի քեառսուն նորընծայ էրէց,
Ոդի յինի քեառսուն վարդապետ,
Ոդի յինի քեառսուն էպիսկոպոս,
Ոդի յինի քեառսուն տուտ՝ սարկաւագ՝,
460 Ոդի յինի քեառսուն սարկաւագ՝,
Պախացող իդի Ցարատայ Քեամին, Բաթմանայ Բիւլին**)։
Դաւիթ դարձաւ իրի տուն,
Նօթ տարուան նըռան գինին իդի խմաւ ***)։

Է։

Մորամելիք՝ ակախաւ՝
Դաւիթ Մարութայ բանձրիկ Աստուարածին

---

*) Ծանօր։ Զատիկի տաելով, Սատունի կողմերն է պըտանվում, նոյն անունի լերան վերայ։

**) Այս երկու առասպելական անունները մեծ հեռաքրքրութիւն են ներկայացնում։ կարելի է յուսալ ուրիշ „նաղլլների“ միջոցաւ պարզել նոցա նշանակութիւնը։

***) Ծանօր։ Դաւթի իւր հօրեղբօր հետ նէճիր (որոկ) գնալը, գիշերուայ զէպքը և Մարութայ բանձրիկ Աստ. վերանորոգելը չէ յիշվում պ։ Աբեղեանի մօտ։ Մինչդեռ այս կտորը շատ լաւ կապում է նախընթացը յետագայ պատմութեան հետ։

Դուրէն շինիր ի,
Կուղբադին էսաց՝
Գնա՛ զՄարութայ բանձրիկ Աստուարածին քեակի՛ էրի։
Կուղբադէն առից խինդ խաղալ ձիաւուր, գնաց,
470 Ծամբիւ մէջ մէկ վիշապմ տեսաւ,
Ակընջնիր կառից, իդի ջիր։
Գնացին Մարութայ բանձրիկ Աստուարածին մօտացան։
Ասքեար յառաջ գնաց.
Էրկու Ֆէրըզ *) դէմ կանգնան
Էրկու խարիր մարդ սպանեցին։
Կուղբադէն գնաց խաստաւ, էսաց՝
—Ես ձիր տէր սպանիր իմ թէ չէք հաւատայ,
Սարէկ [1]) անու ականջնիրն ին.
Տիւ ընչու խամար ձի նեղութին կ՚տէք։
480 Ֆէրըզնիր դարձան գնացին
Ամեն մէկ քեարիմ տակ մտան։
Կուղբադէն իրի Մարութայ բանձրիկ Աստուարածին քեակից,
Սպանից քեառսուն նորրծայ էրէց,
Սպանից քեառսուն վարդապետ,
Սպանից քեառսուն էպիսկոպուս,
Սպանից քեառսուն տաղ՚ սարկաւաղ՚,
Սպանից քեառսուն պակաս մէկ սարկաւաղ՚։
Կուղբադէն դարձաւ գնաց։

Մէկ սարկաւագ՚ մոեր էր լըշերու [2]) տակ,
պրծեր էր.
490 Էլաւ զամու շապիկ թաթխից էրընի մէջ,
Առից ժամու շապիկ էտու ընթէ տակ [3]),
Գնաց Դուրթի մօտ. տեսաւ՝

*) Այսինքն՝ Ցարատայ Քեամին և Բաթմանայ Բիւղին։
1) Անտ։
2) Դիակներէն։ 3) Թեւի տակ։

Դաւիթ եօթ տարուան ներքան գինին դրի կ'խմբ.
Ինկանդար սարխոշցի [1]), աչքիրն էլ չէր բացուի.
Սարկաւագ՝ կանչից, էսաց՝

«Դաւիթ, տիւ խմի, Դաւիթ, տիւ խմի
ըղնրքան գինին,
«Սպանած քեռասուն նորընծայ էրէց,
«Սպանած քեռասուն վարդապետ,
«Սպանած քեռասուն էպիսկոպոս,
500 «Սպանած քեռասուն աւագ՝ սարկաւագ՝,
«Սպանած քեռասուն պակաս մէկ սարկաւագ՝ [2]):

Դաւիթ աչքիր էրաց, ասաւ՝
Սարկաւագ՝ անտեղ կանգներ ի, էսաց՝
—Խունկն է պակաս թէ ձէթ,
Տուէք իմ սարկաւագիւն, թըղ էրթայ։
Սարկաւագ՝ անգամմ էլ էսաց՝

Սպանած քեռասուն նորընծայ էրէց,
Սպանած քեռասուն վարդապետ,
Սպանած քեռասուն էպիսկոպոս,
510 Սպանած քեռասուն աւագ՝ սարկաւագ՝,
Սպանած քեռասուն պակաս մէկ սարկաւագ՝։

Դաւիթ էլ իրիշից էսաց՝
—Խունկն է պակաս թէ ձէթ,
Տուէք իմ սարկաւագիւն, թըղ էրթայ։
Սարկաւագ՝ ժամու շապիկ էթալ Դաւթի յառաջ.
Դաւիթ էսաց՝ սա ի՞նչ իլի.
Սարկաւագ՝ էսաց՝
Կուղբագէն առի խինգ խապար ձիաւոր
Իրի Մարութայ բանձրիկ Աստուարածին մօտացաւ.

---

1) Աբրել։ 2) Նրդ է։

520 Փէլբզնէր էրկու խարբիր մարդ սպանեցին,
Կուզբադէն իրի էրկու ականջ էթալ Փէլբզներու յառաջ,
Ասաց՝ ձի ինչ նեղութին կ'ունիք,
Զի տէր սպանիր իմ,
Թէ չիք հաւատայ, էսայ անու ականջներն են։
Էրկու Փէլբզ դարձան գնացին
Ամեն մէկ քեարիմ տակ մտան,
Ասին՝ մենք մի [1]) տէր ապով [2]) կոիւ կենինք,
Մի տէր սպանաց, էլ ով ապով կոիւ անենինք։
Կուզբադէն իրի Ամարութայ բանձրիկ Աստուածածին
քեակից,
530 Սպանից քեառսուն նորընծայ էրէց,
Սպանից քեառսուն վարդապետ,
Սպանից քեառսուն էպիսկոպոս,
Սպանից քեառսուն աւագ սարկաւագ,
Սպանից քեառսուն պակաս մէկ սարկաւագ։
Ես մտայ լեշերու տակ, ըզգի չտեսաւ,
Ես պրծայ, էլայ խաբար բիրը։
Դաւիթն էլ էլաւ ճնարիմ ծառ քէշից,
Իգի վար ուր թեւին,
Գնաց նեղ ձիւրմ, ասքեարի յառաջ բռնից,
540 Ինգ խապար ձիաւուր սպանից,
Մնաց Կուզբադէն.
Զեռ էթալ՝ Կուզբադէն բռնից,
Կուզբադինի ձին վից ուանին էր,
Զին պրծաւ գնաց.
Կուզբադէն իրի, իրիսաջիւր [3]) քէղվից [4]),
Ատաճիր քէշից, ճակատ փընչռնից [5]),
Պռկընիր կառից, էսայ՝

---

[1]) Մեր։ [2]) Համար։
[3]) Երեսի կաշին։ [4]) Քելթից։ [5]) Խրեց։

Գնա՛ քիւ մարդիւն խարար տու։
Կուզբադէն դաշձաւ դնաց, յաղբրին մօտացաւ։
550 Տեսաւ՝ խաթունքարիր յաղբիւր ջիւր կ'լցին.
Տեսան՝ Կուզբադէն բերան բացի կրծրծդայ կուգեայ.
Իրի մօտացաւ՝
Տեսան մէկ աջլաջկը [1]) բա՛մ ան կնարէն [2]) կուգեայ.
Խաթունքարիր ըսբցին՝
Կուզբադէն ք··աբերան։
Ցիւսա կ'գեաս լերան լերան։
Կուզբադէն էսաց՝
Տիւ սրբրը էրէք [3]) մընչիւ գեարուն։
Սասմայ տեղէն խեղեղ կ'էլնը։
560 Զի էրկաերուն [4]) ձուձ պլուր կ'բիրը
Լեռը ձի եղ չուրթան։
Կուզբադէն գնաց տուն։

Ը.

Ամիսմ էրկու վերէն ընցաւ։
Մ'սրամելիք՝ էսաց՝ Կուզբադէն չ'էկաւ։
Մ'արդիր ըսբցին՝
Կուզբադէն էրկու տարի էլաւ իկի տուն.
Մ'սրամելիք՝ էսաց՝
Կանչիցէք՝ Կուզբադէն թըղ գեայ իմ մօտ։
Գնացին կանչիցին.
570 Կուզբադէն իրի Մ'սրամելքի մօտ։
Մ'սրամելիք՝ էսաց՝ տա ի՞նչ էրատ քիւ խիա։
Տիւ կ'ասէր՝ իս տ'երթամ՝
Մ'արուրթայ բանձրիկ Աստուարածին քեակիմ՝
Ողսիր բիրիմ։

---

1) Այլանդակ։ 2) Կողմէն։
3) Համբերէք։ 4) Մարդկանց։

Գուզբադէն Էսայ՝
Ես կասէր՝ դաշտ դիւրան ի,
Ես չէր գիտը՝ քեար կապան իր.
Գնացի տեսայ՝ քեար կապան իր,
Մսրամելիք՝ Էսայ՝ էլէցէք՝ ասքեար կապինք
580 Էրթանք Դաւթի վերէն կոխ։

«Տընցուցիմ խաղար խինդ խաղար խամար
սաղբանդ [1]),
«Տընցուցիմ խաղար խինդ խաղար խամար
նորալիւկ մանուկ [2])
«Տընցուցիմ խաղար խինդ խաղար խամար
բեղդար [3]) մանուկ,
«Տընցուցիմ խաղար խինդ խաղար խամար
մէջմարդ [4]) մանուկ,
«Տընցուցիմ խաղար խինդ խաղար խամար
ախթիար մանուկ,
«Տընցուցիմ խաղար խինդ խաղար խամար
ծիր մանուկ *)։

Գնացին Հիւռայ դաշտ դրին։
Քեանիմ էրկինք ասաղ կ'ճլվլայ,
Ընցկում չադը—խէվաթ զարկին Հիւռայ դաշտ **),
590 Դրին նստան։

---

[1]) Երաժիշտները։
[2]) Այստեղ «գինուոր» նշանակութեամբ է գործածուած։
[3]) Բեղերը եկած։ [4]) Մէջակ հասակի։
*) Երգ է։
**) Զատիկի ասելով՝ Մարայ և Սասունի մէջտեղն է։

Թ.

Դաւիթ գնաց Մարութայ բանձրիկ Աստուածածին
Էլի շինից,
Դի յինի քեառսուն նորընծայ էրէց,
Դի յինի քեառսուն վարդապետ,
Դի յինի քեառսուն էպիսկոպոս,
Դի յինի քեառսուն աւագ՞ սարկաւագ՞,
Դի յինի քեառսուն սարկաւագ՞,
Երկու ֆէրըզ էլ իդի պախացող։
Դրի տուն, նիտ անեղ առից,
Գնաց մընչ պառուս կուրկին
600 Էլի լիւր սպանից։
Պառաւ գնաց տեսաւ՝
Դաւիթ էլ յընկի կուրկի մէջ
Լիւր կ՚սպանի.
Էսաց՝ տիւ աբլնիս քիւ խօր տեղ
Մի ոճմ կարիս *),
Լիւր քի ի՞նչ ոճ ա՚կարի.
Մ՚սրամելիք՝ իկի Լիւռայ դաշտ դրի,
Քեանիմ աստղ էրկինք կ՚ճըլվըլան,
Ընցկում չաղը—խէվաթ դարկի
610 Գետս [1]) ի գեայ Սատմայ խոզ քեար օղողը տանը։
Էսաց՝ պառաւ, ձի էշմ չ՚կայ խեճնիմ,
Շէղգիկմ [2]) չկայ՝ զարկիմ իմ մէջ,
Ես տէ՚րթամ Մսրամելքի խիտ ի՞նչդ
կռիւ էնիմ։
Պառաւ էսաց՝ գրեոզս քի տանի, Թըլօր-Դաւիթ,
Քիւ խօր ի՞նչ չ՚կայ՝

---

[1]) Շուտով։ [2]) Մեծ դանակ։

*) Օգուտ տալ։

Քիւ խօր չ՚կայ Քուռկիկ Ջալալին,
Քիւ խօր չ՚կայ Թուր կէծակին,
Քիւ խօր չ՚կայ խաչ պատրազին
վար աջ թեւին,
Քիւ խօր չ՚կայ ոսկի գիւաի՞ն [1],
620 Քիւ խօր չ՚կայ կապէն խարիւկին [2],
Քիւ խօր չ՚կայ ոսկի քեամար *),
Քիւ խօր ի՞նչն է պակաս,
Տիւ կըսիս՝ ձի բա՞մ չ՚կայ էրթամ կռիւ։
Դաւիթ էսաց՝ պա՛ռաւ, խրօղբէրս չի տայ,
Էսաց՝ գնա՛ զօրեովէն խրօղբեօր մ՚օտէն ա՛ռ։
Դաւիթ յէլաւ տուն էկաւ,
Կանչից խրօղբեօր՝

«Ղօրախո՛ւտ [3] խրօղբէր,
Հ՚տաս խաթրեով,

---

[1]) Թագ։ [2]) Զդեստ։

[3]) Իմ հօր հոտը կրող, ունեցող։

*) Ծանօթ. Մի ուրիշ վարիանտ, որ մենք գրի ենք առել, (Խլաթայ բարբառով) աւելի մանրամասն նկարագրութիւն է տալիս զէնքի և զգեստի. Մհերը դերեզմանից ձայն է տալիս Դաւթին՝
Առ իմ Քուռկիկ Ջալալին
Թուր կէծակին,
Գուրզ հազարին,
Շապիկ զրեխին,
Թագն ի զրեխին,
Ջուբէն ի թաթարին,
Միջկապն ի քեալաբանդին,
Ջըզմէն [1]) ի ֆանարին [2]),
Համայիլ սուրբ խաչ Մարութայ բանձրաձիկ
սուրբ Աստուարաձին։

[1]) Երկար կոշիկները։ [2]) Ծալ ծալ։

630 «Չիս՝ կէնիմ զօրեով *)։

Ղրօղբէր Էսաց՝
Գրեցոս քե տանի, թըլօր Դաւիթ,
Ի՞նչ կուզիս՝ չըմ ի տայ խաթրեով
Կէնիս զօրեով։
Էսաց՝
Քենէ կուզիմ իմ խօր Քուռկիկ Ջալալին,
Քենէ կուզիմ իմ խօր Թուր կէծակին,
Քենէ կուզիմ իմ խօր խաչ պատարագին
վար աջ թևին,
Քենէ կուզիմ իմ խօր ոսկի գիւտի՞ն,
640 Քենէ կուզիմ իմ խօր կապէն խարիւկին,
Քենէ կուզիմ իմ խօր ոսկի քեամար։
Կ՚տաս խաթրեով՝ չիս կէնիմ զօրեով։
Ղրօղբէր Էսաց՝
Քիւ շանց ավոդի բերան կուտրէր,
Քի շանց չ՚տէր։
Բանիրն էլ գնաց, ոդէն էլ գնաց։
Էսաց՝ ինչ ձին ի՝ նշանց չըմ ի տայ,
Ինչ խաչ պատարագին ի՝ գեոյ [1]) սանդեոդվ [2]),
Ան էլ չըմ ի տայ։
650 Մ՚էկէլ բանիրով կոիւ չ՚էրթայ։
Դաւիթ Էսաց՝
- Ղրօղբէր, իմ խօր բանիր բի՝։
Ղրօղբէր գնաց, առից՝ իբի։
Ոսկի գիւտի՞ն քեատուն խոնդէալի [3]),
բամբակ իդի մէջ՝

---

1) Կայ, է։ *) Երդ է։
2) Սանդուղ տակ։
3) Զատիկի ասելով՝ մօտ վեց լեռը է։

Նուրէն դադրաւ [1]) գլեռխ.
Կապէն խաբիւկին խաղեաւ՝
Քեառասուն փաթ իբի բիւլիւբ մէջաց՝
Նուրէն կուճկից։
Ոսկի—քեամարն էլ քեառասուն փաթ իբի
բիւլիւբ մէջաց՝
660 Նուրէն կուճկից.
Թուբ—կէծակին կապից վերէն՝
Ինջաւ խատ գեանի՛ն քէշ կ՚երթէր։
Էսաց՝ խրօղբէր՝ իմ խօր ձին տա՛ւ։
Խրօղբէր էսաց՝ գնա՛ ախոռ։
Քիւ խօր ձին ոն ը՝ տա՛ բի։
Դաւիթ գնա՛ց ախոռ։
Ձեռ վըր որ ձիու քեամկին իղի՝
Փուբ իտու գեանի՛ն։
Դաւիթ դարձաւ իրի։ էսաց՝
670 —Խրօղբէր։ տիւ ձի չբս տիբի։ [2])
Տիւ գոհդրէժ [3]) իս տիբի.
Իմ խօր ձին բի։
Խրօղբէր էսաց՝
Գրեռդս քե տանը։ թբլօր Դաւիթ։
Քիւ խէր ընչ մեռի՝ մընչիւ ասուբ
Քիւ խօր ձին էրիր իմ տուն ինի։
Խաւիրու թառի տակ կապիր իմ։
Տիւռն էլ շարիր իմ։
Ցերդիւսվէ խուտ ջիւբ կ՚տամ։
680 Մ՚սրամելքի հախուն չբմ գըշղի [4]) տիւռ բանամ։
Ձին տիւս խանի։
Դաւիթ գընա՛ց տիւռ քակից։

---

[1]) Նստաւ։ [2]) Պահել։

[3]) Գոհ ականջ և գրեմ երկար։ այսինքն՝ երկար ականջ ունեցող կենդանի (էշ)։ [4]) Համարձակի։

Զիան մօտ գընաց, տեսաւ՝
Թիզմ ծեռտ քեամկի վերէն կայնիր ի.
Ծեռտիր էտու տակ,
Ձեռ քեամկի վերէն կը.քից,
Զին ջեոթքիմ [1]) էթալ,
Մաղմ [2]) յառիք տարաւ դէն։
Դաւիթ ձին քէշից տիւս,
690 Զիուն էսաց՝ քի տէր չկէր՝
Իս քի տէր իմ.
Քի թիմար էնող չ՝կէր՝
Իս քի թիմար էրող իմ.
Քի էմ [3]) տվող չ՝կէր՝
Իս քի էմ տվող իմ։
Զիու գլեոխ պագնից, էսաց՝
—Խրօղբէր, ձիու զին բի՛։
Խրօղբէր ձիու զին իբի.
Խրօղբէր էսաց՝
700 Մ՝հեր զին ինչ կ՝գնէր ձիու վերէն,
Տայնք ինչ կքէր՝ [4])
Զիու յէռջին էրկու ոտ գետնուց կ՝կտռէր։
Էսաց՝ թէ Դաւիթն էլ վիրուց՝
Կարող է էրթայ կռիւ,
Թէ չ՝վիրուց՝ չ՝կենայ կռիւ էնը։
Դաւիթ զին իդի ձիու քեամկի վերէն,
Տայնք ինչ կքից՝
Զիու չուրս ոտն էլ գետնուց կտռից։
Էսաց՝ խրօղբէր,
710 Իմ խօր խաչ—պատարագին էլ տու.
Խրօղբէր էսաց՝ իս կարող չեմ տամ,

---

[1]) Քացի։ [2]) Մաղի պէս շարած առաստաղ։
[3]) Ուտելիք։ [4]) Ամրացնէր։

Թէ տիւ արժան իս՝ կ'գեայ վար քիւ թիւին,
Թէ տիւ արժան չիս՝ չի գեայ.
Դեղոյ սանդեղովվէ, տիւռ շինուկ։
Դաւիթ գնաց սանդեղոյի յէռջիւ,
Ծընկնիր էղար գետի՛ն,
Դեղոյայ Ասաբծուց էրաւ,
Էլաց, գիւռաց.
Ասաբծու հրամանեով սանդեղոյի տիւռ բացուաւ,
720 Խաչ—պատրաղին իրի վար աջ թևին,
Էջաւ վար մէջկրպին [1]։
Էլաւ, ձին խեծաւ.
Խրոդբեօր կնիկ էսաց՝
Դաւիթ, կերթաս Մ'սրամելքի ձախ ձիւն բերիս,
Ես էնիմ իմ աչիչ դեղ։

Դաւիթ վար ձիու քեամկին չէր էրևայ՝
Էնկանդար պղաիկ էր։
Խրոդբէր էսաց՝
Մ'էկ յաղբիւր կայ քիւ յառաջ՝
730 Քիւ խոր կաթնաղբիւրն ի.
Ձիուց կիջնիս վար, կը լըվացուիս,
Խաց կուտիս, պառկիս անտեղ, քընիս,
Վիր կելնիս, ձին կ'խեծնիս կերթաս՝
Կերթաս դաշտի մէջ.
Պոզվրաէ սուն էրկնուց իջի գետի՛ն.
Քիւ թուր կ'զարկիս,
Թէ կառից՝ գնա՛ կռիւ,
Թէ չ'կառից՝ չերթաս կռիւ,

---

[1]) Կաշուց գօտի։ Որովհետև Դաւիթ դեռ փոքր էր, ուստի խաչը չ'տեղաւորեց թիկունքի վերայ, այլ վայր իջաւ մէջքին։

Դարձի՛ արի՛։
740 Դաւիթ կանչից՝

«Տանակի՛ք՝, ինչ խաց կրթխէ՛ք՝,
«Դաւիթ մէջ յիշացէ՛ք՝։
«Ջհելքի՛ր՝ ինչ զմբիւշ [1]) կենէ՛ք՝,
«Դաւիթ մէջ յիշացէ՛ք՝։ *)

Դաւիթ ձին քշից գնաց
Քեաղքէն տիւս էլաւ։
Խրօղբէր կանչից՝

«Խաղար հէ՛ֆ (մէկ) ափսո՛ւս
Միր Քուռկիկ Ջալալին։

Դաւիթ դադրաւ, էսաց՝
750 Թէ բանիր գեովաց, ըզգի չ՝գեովաց՝
Տ՝երթամ զխրօղբէրն էլ սպանիմ,
Նուրէն էրթամ կոիւ։
Խրօղբէր կանչից՝

«Խաղար հէ՛ֆ (մէկ) ափսո՛ւս
Միր Թուր—կէնճակին,
«Խաղար հէ՛ֆ (մէկ) ափսո՛ւս
Միր խաչ պաարազին ինչ վար աջ թէւին,
«Խաղար հէ՛ֆ (մէկ) ափսո՛ւս
Միր ոսկի գիւտին,
«Խաղար հէ՛ֆ (մէկ) ափսո՛ւս
Միր կապէն խաբիւկին,
«Խաղար հէ՛ֆ (մէկ) ափսո՛ւս
Միր ոսկի քեամար,

---

[1]) Ուրախանալ։ *) Երգ է։

«Խաղալ հէջ (մէկ) ափսոս
Մի նորալիւկ մէկ տակ մանուկ։ [1])
760 Դաւիթ էսաց՝ քիւ բերան կուտրէր,
Ադ մէկ խօսք չ՚տէր,
Ըզքի տ՚սպանէր, նուրէն էրթէր կոիւ։

Ժ.

Դաւիթ ձին քշից գնաց,
Գնաց յաղբրի վերէն։
Դաւիթ վեր չ՚ելաւ.
Ձին կայնաւ. զանդիւմ էզարկ՝
Ձին չ՚գնաց. զանդիւմ էլ էզարկ՝
Ձիու կողաշարքմ կուտրաւ.
Դաւիթ ձիուն էսաց՝
770 —Քիւ վիզ կուտռը. իս կրսէր՝
Տիւ ըզզի էրընէ զիտիր տընցրցէր,
Աս պուտմ ջիւր ի,
Տիւ ըզզի չէս կենայ ընցրցի։
Ասծու հրամանեով ձիուն լիզու իրի,
Էսաց՝ կիջնիս վե,
Պուտմ նա ջիւր տաս իմ կողաշարք՝,
Ձիս՝ զքի կտամ էրէքեական իրիցրցիմ։
Դաւիթ ձիուց իջաւ վար,
Ձիու գլխոն պագնից,
780 Պուտմ ջիւր իտու ձիու կողաշարք՝։
Ձին էսաց՝
Ձէ քիւ խրօղրէր թամբաի էրաւ [2]) քիւ վերէն՝
Մ՚էկ յաղբիւր կայ քիւ յառաջ,
Քիւ խօր կաթնաղբիւրն ի.

---

1) Մի հատիկ։
2) Պատուիրեց։

Կիջնիս անտեղ, կըվացուիս, խաց կուտիս,
Կ'պառկիս անտեղ, կը քնիս։
Վիր կելնիս քիւ ձին կ'խնծնիս,
Նուրէն կերթաս կոիւ։

Դաւիթ անտեղ վըլացուաւ, խաց կերաւ,
790 Ջիւր խմաւ, պառկաւ քնաւ.
Դաւիթ ակախաւ, Ենկանդար վորժ [1]) առի՝
Շիւրիւրի մէջ կեախի [2]) փաթրամիշ [3]) էղի։
Շիւրիւր էխան, Նուրէն ոսկի գիւաին իրի,
Քեառասուն խոնդքեարի բամբակ մէջէն էխան՝
Անջախ [4]) գնաց դիեոխ,
Կապէն խաբիւկին խագեաւ՝
Քեառասուն փաթ էլ իրի ըիւլիւր մէջաց՝
Անջախ կուճկուաւ.
Թուր կէծակին կապից վերէն՝
800 Էջաւ խատ ծնկնիրուն։
Ամէ պատարագին իջէր էր վար մէջկըպին՝
Կպաւ վար թեւին։
Ձին խեծաւ, գնաց դաշտի մէջ։
Տեսաւ՝ պողվրակ սուն
Էրկնուց իջի գետի՝ն.
Թուր էզարկ, կարից՝
Կալամ վար կալամի [5]) կանգնաւ.
Դրեն մտով չէր կարի, կանչից՝

«Ձեռնիր, տիւ կուտուր կէնէր,
810 «Աչքիր, տիւ խաւար կէնէր,
«Բաժնիր [6]), տիւ չուր դառնէր,
«Տիւ ըզգի բէնամուս չէնէր *)։

---

1) Այժ։
2) Կեախի=գեախ=այժմ։
3) Նեղացել է։
4) Հաղիւ։
5) Շերտ։
6) Հատակ, մէջք։
*) Նրզ է։

Զին էսայ՝ քիւ բերան կուտրի,
Քեամիմ ուղի Աստրծուց։

«Սարիր՝ քեամիմ կուգիմ,
«Զիւրիր՝ քեամիմ կուգիմ,
«Ծա մէկ տակ սուն շուռ տէր *)։

Քեամիմ էլաւ, սուն շուռ էտու,
Դաւիթ գեղայ Աստրծուց էրաւ,
820 Աչքիր ժրաւ, [1]) ձեռնիր ժրաւ,
Բաժ կանաչացաւ,
Էլաւ զձին խեծաւ,
Գնաց Լիւռայ դաշտի գլեոխ կայնաւ։

ԺԱ.

Տեսաւ՝ քեանիմ ասաղ էրկինք կ'ճլվլան,
Ընցկում [2]) չաղբը—խէվաթ Լիւռայ դաշտ դարկած։
Դաւիթ տեսաւ, հախու [3]) զահաւուրաւ՝

«Օղորմած բարերար Աստուած,
«Անունք էլնին բարձակ,
«Ես իլնըմ կրակ՝
830 «Ես չըմ կենայ անունք իրիցրցէ.
«Օղորմած բարերար Աստուած,
«Անունք էլնին գեարնան մատղաշքիր [4]),
«Ես իլնըմ գեարնան անութի գէլիր՝
«Ես չըմ կենայ զանունք կճոի **)։

Զին էսայ՝ ինչ կ'վախանաս,

---

*) Երգ է։ [1]) Առողջացաւ։ [2]) Նոյնքան։
[3]) Անհց։ [4]) Մատղաշ դառներ։
**) Երդ է։

Ցիւ իմ քեամկէն վե չիջնիս,
Քեանիմ քիւ թուր կարի՝
Ընցկում իմ բէհն [1]) ա՛կարի.
Քեանիմ քիւ թուր կարի՝
840 Ընցկում իմ վուքիր [2]) ա՛կարին,
Քեանիմ քիւ թուր կարի՝
Ընցկում իմ պուչ ա՛կարի.
Իմ քեամկէն վե չ՚գեաս։
Դաւիթ էսաց՝ անունք ա՛ակախցնիմ [3])
Նուրէն էրթամ կռիւ։

«Որ քնուկ էք՝ յարթուն կացէք՝
«Որ յարթուն էք՝ էլրցէք՝ նստեցէք՝
«Որ էլեր էք՝ նստեր էք՝ էլրցէք՝ կանգնեցէք՝
«Որ կանգներ էք՝ ձիր ճակիր [4]) կապիցէք՝
850 «Որ ձիր ճակիր կապիր էք՝ ձիր ձիանք թամքեցէք՝
«Որ ձիր ձիանք թամքեր էք՝ էլրցէք՝ խնծրցէք՝
«Զըսէք՝ Դաւիթ գեող էր՝ գեող իրի՝ գեող գնաց *)։

Դաւիթ ձին քշից մըջ ասքեարին՝
Ինկանդար մարդ սղանից՝
Էլաւ էրընէ խեղեզ՝ լէշիր տարաւ։
Մէկ ծիր ախթիար մարդմ կէր անտեղ՝
Էսաց՝ «փուշա՝ փուշա» [5])։
Էսաց՝ փուշա [6]) տիւ իս
Դհա մատմ էրէխայ իմ
860 Իս ինչ փշտութիւն էրիր իմ
Ցիւ ձի կսիս «փուշա»։

---

1) Շունչ։ 2) Սաթեր։
3) Իմաց տամ։ 4) Զէնքեր։
5) Զատիկի ասելով՝ նշանակում մէկ՝ ճանապարհ տուէք։
6) Փուչ՝ վատ։
*) Երդ է։

Ախթիար Էսաց՝ խոդիւտ արիւուդ կ՚մեռնիմ՝
Իս քրդի չրմ ըսը փուշտ՝
Միր լեզուն անպէս ի։
Էս մարդիր ամէն մօրէն մէկ ին՝
Զօրեռվէն քէշի բիրի [1]՝
Տիւ ընչու զանոնք կ՚սպանիս՝
Անոնց մեղք քիւ վիզ կիցկիս.
Դնա՛ քիւ նայար [2] սպանի։
870 Դաւիթ Էսաց՝ անուր չաղբր ո՞ր մէկն ի.
Ախթիար Էսաց՝ որ չաղբի կուշտ իս կանգնիմ՝
Անիկ ան չաղբի տակն ի։

Ախթիար գնաց կանգնեաւ չաղբի կուշտ՝
Դաւիթ էլ գնաց մտաւ էն չաղբի տակ՝
Տեսաւ՝ Մսրամելիք՝ պառկի՝ քնացիրի՝
Մսրամելիք՝ քեռասուն զեռզ խուր տուի փուրիր՝
Թոռէ գնջիլ մէջ կախ տուի՝
Թաղէս [3] խուրու բերնի վերէն թըլի։
Դաւիթ Էսաց՝ մարէ՝
880 Մսրամելիք՝ քնուց խան վի՝
Անմահ անուր մահ իմ բիրի [4]՝
Մէր Էսաց՝ որդի՝
Մսրամելիք՝ կ՚քնի մընչիւ եօթ օր՝
Ասօր իրիք օր կայ՝ քնիր ի.
Էսաց՝ գիւթնէ խուփ թաղ կրակ։
Խուփ կարմրցաւ՝
Էխան իդի Մսրամելքի ոտաց տակ՝
Քրդիւց [5]՝ ընկեաւ ոտաց։

---

1) Մսրամելիք։
2) Թշնամին։ 3) Թաղես։
4) Անմահ նորան մահ եմ բերել։
5) Կիզեց՝ այրեց։

Մսրամելիք՝ Էսաց՝
890 Օ՜ֆ՝ ասօր ալ իմ տեղ խսրատ չէր շինի՝
Լուիր ըզլի կըծիցին։
Դաւիթ Էսաց՝ իլի վիր՝
Լիւ ղքի չի կըծի՝
Մսրամելիք՝ յէլաւ նստաւ՝
Էսաց՝ Դաւիթ՝ ձիուց իջի տակ՝
Ռահաթին՝ նուրէն կըլնեն՝ կռիւ էնին՝։
Դաւիթ Էսաց՝ չըմ իջնի՝
Մէրն էլ Էսաց՝ իջի՝ ճամբաս իկիր իս՝
Նեղացիր իս՝ իջի քիչմ ռահաթի՝
900 Նուրէն իլըցէք՝ կռիւ էրէք՝։
Դաւիթ ձիուց իջաւ տակ՝
Զին ըռըկաւ՝ գնաց դաշտի մէջ։
Դաւիթ նստաւ ադ թաղսին՝
Գնաց խուրու տակ՝
Թոռէ զընջիլ կըք՝վաւ [1]) ըիւլիւր Դաւթին։
Մսրամելիք՝ Էսաց՝ նա հէթըմն էր՝
Ինա ձի [2]) կռիւ տ՝էնէր՝
Թրդ կենայ ատեղ մընչիւ առաւօտուն՝
Կրլնիմ՝ կը սպանիմ։

ԺԲ՝

910 Զէնեով Ցեովան յիրիկուն պառկաւ քնաւ՝
Ակախաւ էլաւ նստաւ՝
Էսաց՝ կնի՝կ՝ իլի ճրագ կպու՝
Ինս տեսայ՝ վըր Մսրայ արիւ էր՝
Վըր Սասմոյ ամպ էր։
Կնիկ Էսաց՝ քիւ տուն աւիր՝
Ցիւ չըս քնի՝ քիւն տիւ կը քընիս՝

---

1) Փաթաթուեց։ 2) Ինձ հետ։

Երազ խալղին կ՚տեսնիս։
Վո՞վ գը

Տիւ կսիս՝ քիւն տիւ կը քընիս,
Երաշ խալղին կ՚տեսնիս։
Մնիկ էլաւ ճրագ կպուց,
Զէնեով Ցեովան ճրագ առից
Գնաց տխոռ,
Ձեռ իդի բեռզ ձիու քեամկի վերէն,
950 Էսաց՝ բեռզ ձին, խոգիւդ արիւուդ կ՚մեռնիմ,
Տիւ ըզգի հիբ խասցիս Դաւթի կուուն։
Բեռզ ձին էսաց՝ Աստու հրամանեով
Մ՚ընչիւ լիւսնայ՝ ըզքի կ՚խասցնիմ Դաւթի կուուն։
Զէնեով Ցեովան էսաց՝ քիւ վիզ կուտաը,
Իմ ձեռաց քեատ [1]) խարամ ըմբը վրբ քիւ բերնին,
Մ՚ընչիւ լիւսնայ կսպանին,
Տարիմ չբն սպանի։
Գնաց ձեռ իդի կարմիր ձիու քեամկի վերէն,
Էսաց՝ կարմի՚ր ձին,
960 Տիւ ըզգի հիբ խասցիս Դաւթի կուուն։
Կարմիր ձին էսաց՝ Աստու հրամանեով
Մ՚ընչիւ տիւ չկարէմ [2]) քէշիս,
Ըզքի կ՚խասցնիմ Դաւթի կուուն։
Զէնեով Ցեովան էսաց՝
—Քիւ բերան կուտաէր,
Մ՚ընչիւ չկարէմ քէշիմ, չխօ կ՚սպանին։
Գնաց ձեռ իդի սև ձիու քեամկի վերէն
Էսաց՝ սև ձին, խոգիւդ արիւուդ կ՚մեռնիմ,
Տիւ ըզգի հիբ կ՚խասցիս Դաւթի կուուն։
970 Էսաց Աստու շնորքեով Աստու հրամանեով
Տիւ ոտ դնիս զանդիւն,
Զուբ շուռ տաս մէկէլ զանդիւն,

---

1) Աշխատանք։
2) Ծխախոտ։

Տիւ ըզքի վըր իմ քեամկին բանիս՝
Ես զքի կ'խասցնիմ Լիւռայ պաշտի գլեսխ։
Զէնեով Յեսման ձիւ գլեսխ պաղնից,
Լէլաւ ձին խեծաւ, սա իզի զանգիւն,
Զուր շուռ իտաւ մէկկէ զանգիւն՝
Լիւռայ պաշտի գլեսխ ձին կայնաւ։

ԺԳ.

Զէնեով Յեսման կանչից, Էսաց՝
980 Դրեսոզս քե տանը, Թըլօր Դաւիթ,
Մարութայ բանձրիկ Աստուտրածին,
Խաչ պատրազին ընչ վար աջ թեքին,
Տիրն յիշա՝ զքի թափ տու։
Դաւիթ Էսաց՝ հայ հոյ,
Խրօզբէրս էլ իկի ասաեզ.
Դաւիթ Էսաց՝ եա՛ Մարութայ բանձր Աստուտրածին,
Խաչ պատրազին, ընչ վար աջ թեքին,
Խնդիրք ձիզնէ իմ էրի,
Տիւ՝ ձի հասնէք՝։
990 Դաւիթ զինք թափ էտու՝
Խուր էլաւ գաշտ գիւրան յեռջիւ,
Զընջլու կտուրքիր էրկնուց էկին տակ։
Դաւիթ յէլաւ, գնաց գախ ձին,
Զին չի գեայ ձեռ.
Նալվար էլաւ [1]) ձիուն,
Զին էկաւ ձեռ, էլաւ ձին խեծաւ,
Էկաւ Մսրամելքի գլխու վերին կայնաւ։
Էսաց՝ Մարէ, ան քեաֆիրը խան վե։
Մէր Էսաց՝ ասօր չուրս օր կայ պատկիր ի,

---

[1]) Խնդրեց։

1000 Որիք՝ օր էլ կուզէ, քնուց վիր իլնի։
Էսաց՝ զիւթնէ, խուփ թաղ կրակ։
Էթալ կրակ, կարմրցաւ։
Էխան իզի ռասց տակ։
Քըզիւց ընկնաւ ռա։
Մսրամելիք՝ էլաւ նստաւ, էսաց՝
Ասօր տիւ իմ տեղ խորոտ չէք՝ չինի։
Լվիր չթոզին իս քիշըմ քնէր։
Դաւիթ էսաց՝ իլի վիր։
Անմախ քի մախ իմ բիրի։
1010 Անզրեոզ քի զրեոզ իմ բիրի։
Մսրամելիք Դաւթին էսաց՝
Մենք՝ կոիւ զօրեովէն էնինք թէ նօրթեով [1]։
Դաւիթ էսաց՝ ինչզ քիւ ջան կուզէ։
Անպէս կենինք կոիւ։
Մսրամելիք՝ էսաց՝ կոիւ նօրթեով էնինք։
Մսրամելիք՝ էսաց՝ յառաջ տիւ ա՛զարկիս
Թէ իս ա՛զարկիմ։
Դաւիթ էսաց՝ յառաջ տիւ զարկ։
Չի մարդ չկայ իմ յետաւէն լեայ։
1020 Մարդ չունիմ, ազգէր չունիմ,
Ոսկր չունիմ, մէր չունիմ,
Ըզզի սպանիս էլ՝
Մարդ չկայ իմ յետաւէն լեայ։
Ես զքի սպանիմ՝
Քիւ ասքեար կ'մնայ ասանց առանց տէրութին։
Դաւիթ ձիւց իջաւ տակ նստաւ։
Էսաց՝ Մսրամելիք՝ քիւ զարբիր [2] զ՚ելի։
Մսրամելիք՝ զէին խեծաւ։
Որի գեորդմ էգարկ Դաւթին։

---

1) Հերթով։ 2) Դարբ նշան. հարուած։

1030 Դեախ ընց դեախ [1]) թող դադրաւ վերէն.
Մարամելիք՝ էսաց՝ խոզածին,
Ասող էր, խոզ դարձաւ։
Թող վերցաւ, տեսաւ՝
Դաւիթ ադաեղ նստուկ ի։
Մարամելիք՝ գնաց իրի,
Գեորդմ էլ էդարկ՝
Երկու օր, երկու գիշիր թող դադրաւ Դաւիթի վերէն։
Մարամելիք՝ էսաց՝ խոզածին,
Ասող էր, խոզ դարձաւ։
1040 Թող վերցաւ, տեսաւ՝
Դաւիթ նստուկ ադաեղ։
Մարամելիք գնաց իրի,
Գեորդմ էլ էդարկ՝
Իրիք՝ օր, իրիք՝ գիշիր թող դադրաւ Դաւիթի վերէն։
Մարամելիք էսաց՝ խոզածին,
Ասող էր, խոզ դարձաւ։
Թող վերցաւ, տեսաւ՝
Դաւիթ ադաեղ նստուկ ի։
Դաւիթ էսաց՝
1050 Մարամելիք՝, նորաթ չ'խասաս՝ ձի.
Մարամելիք՝ էսաց՝ նորաթ խասաս՝ քի։
Կ'խնդրեմ՝ քեզնէ եօթ օր ձի մոհլաթ [2]) տաս.
Դաւիթ էսաց՝ եօթ օր չէ,
Քեառասուն օր էլ քի մոհլաթ կ'տամ։
Մարամելիք՝ գնաց քեառասուն դեաղ խուր խոռ փուրիր
Նստաւ խուրու տակ,
Քեառասուն ջաղացքեար իրի խուրու վերէն,
Քեառասուն գիւմշու կաշի էթալ ջաղացքեարի վերէն։

---

1) Առաւօտից մինչև մութ առաւօտ։
2) Միջոց, ժամանակ։

Մսրամելիք՝ Էսայ՝
1060 Դաւիթ՝ քիւ գարբիր զարկ։
Դաւիթ ձին խեծաւ՝ իրի
Թուր ա՛զարկէր՝
Մէր իրի յառաջ՝ Էսայ՝
Քիւ աչքիր բռնի՝
Ընցկում իս զքի ալիրիր իմ՝
Թէ ալիւ զՄսրամելիք՝ սպանիս՝
Էսայ՝ նա մէկ գարբ քի խաթիր։
Գնաց իրի՝ գարբ մէլ ա՛զարկէր՝
Քուր իրի յառաջ՝ Էսայ՝
1070 —Թէ ալիւ զՄսրամելիք՝ սպանիս՝
Քիւ աչքիր բռնի՝
Ընցկում իս զքի շախիր իմ [1]։
Էսայ՝ նա մէկ գարբն էլ քի խաթիր թըղ ըլիր։
Գնաց՝ իրի՝ գարբմ էլ ա՛զարկէր՝
Մէր էլի իրի յառաջ՝
Էսայ՝ Թէ ալիւ զՄսրամելիք՝ սպանիս՝
Իմ ծծի կաթ խարամ ըլնի վրր քիւ բերնին։
Դաւիթ Էսայ՝ փուշտ՝ կանգ՝
Իս իմ՝ իմ Աստուած՝ նա մէկ գարբ՝
1080 Ան մէկ գարբն էլ ալիւ իմ ձեռնէն ա՛խանիս՝
Դաւիթ զթուր էզարկ
Քառասուն զիւմշու կաշին կտրէց՝
Քառասուն ջաղցքեարն էլ կտրէց՝
Գնաց վրր Մսրամելքի գլխուն՝
Մընչ աջ ձիւն՝ մընչ ձախ ձիւն գնաց տակ։
Դաւիթ Էսայ՝ խոդածին՝
Ղսոդ էր՝ խոդ դարձաւ։
Մսրամելիք՝ Էսայ՝ գհա [2] իս գ՛եատեղն [3] իմ։

---

1) Պահել եմ։ 2) Դեռ։ 3) Այստեղ։

Դաւիթ էսաց՝ մըհը [1]) դքի թափ տու։
1090 Զինք՝ թափ իտու՝
Կաուրմ ինկեաւ անտեղ։
Մէկէլ անտեղ։
Դաւիթ էլաւ։
Մսրամելքի ձախ ձիւն էղար ըռըմը [2]) ծէր։
Իդի վար թէին։
Առից իրի մըտ խրօղբէր։
Դաւիթ խրօղբէր էլան էկին Սասմայ քեաղաք՝
Գնացին տուն։ Դաւիթ էսաց՝
—Խրօղբեօր կնիկ, ասիկ աչիչ դեղ չէ։
Տիւ հանուր ձի չանայ տուիր [3])։
Առա՛ Մսրամելքի ձախ ձիւն դի՛ քիւ տու։

---

1) Գալա։ 2) Նիզակի։
3) Ինձ համար չարը կամեցար։

ԹՐԼՕՐ—ԴԱՒԻԹ

ԵՒ

ԽԱՆԴԻՒԹ ԽԱԹՈՒՆ·

Դառնամ զողորմին տամ Մելքսեթ քահանին
Դառնամ զողորմին տամ Սանասարին
Դառնամ զողորմին տամ Բաղդասարին
Դառնամ զողորմին տամ Մհերին
Դառնամ զողորմին տամ Թրռլան Դաւթին
Դառնամ զողորմին տամ Զէնեով Յեովանին
Դառնամ զողորմին տամ Ցրռան Վերգեոյն
Դառնամ զողորմին տամ Պարոն Ասաղին
Դառնամ զողորմին տամ ականջ էրսղի խօր մօր խոգիւն *):

Ա·

Զմշկիկ Սուլթան Դաւթի խամար ուզիցին՝
Դաւիթ Զմշկիկ Սուլթան մատնիքնիր խատ իրարու փոխիցին·

«Ինկին զեոյ ինին երկու կաղուզան [1])՝
«Սանդիւթ խաթուն Դաւթի խամար զեովացին՝
«Անու բաժ [2]) բալէն կխարցիս՝
«Քեառսուն կանդիւն ը՝ մէկն էլ յաւիլ ը·

---

*) «Ողորմին»՝ Զատակի տեսլով՝ կրկնվում է ամեն մի ճիւղի սկզբում:

[1]) Աշուղ: Պարզ է՝ որ կաղուզան և Կաղզուան բառերը՝ բացի հնչիւնների նմանութիւնից՝ ոչ մի կապ չունեն միմեանց հետ: [2]) Հատակ:

«Անու ճակատ լէնուա կ՚խարցիս՝
«Ծոթ կանգիւն ը՝ մէկն էլ յաւէլը.
«Անու ընքնիր կ՚խարցիս՝
«Կալամով [1]) ին քէշած.
«Անու աչքիր կ՚խարցիս՝
«Զինու կրթիէն [2]) ը.
«Անու սրվակութիւն կ՚խարցիս՝
«Քանց գէզած [3]) բամբկի քիւլէն սրվակ ը *):

Դաւիթ էսաց՝ խրօղբէր,
Իս Զըմշկիկ Սուլթան չըմ առնը,
Ց՚էրթամ Ղանդիւթ խաթուն բիրիմ։
Ղրօղբէր էսաց՝ Դաւիթ, կէրթաս,
Մ՚ընչիւ անու խնձիւր չը թլի քի՝
Վիր չէրթաս։
Դաւիթ յէլաւ, ձին խնծաւ, գնաց։

Գնաց Ղանդիւթ խաթունի խօր քեսապք։
Ցեսաւ՝ սև մարդմ յէռջիւ գարգեսին [4]) կայնիր ի,
Պառնկմ յէրկինք, մէկէլ յիջի գեսի՞ն.
Դաւիթ էսաց՝ թէ բարիւ տամ՝
Ընչ մօրէն մէկնիր իմ՝ մընչիւ յասօր
Մարդիւ բարիւ չըմ տըւի.
Թէ բարիւ տամ՝ տըլնը խուց [5]),
Ինկնը իմ սի՞բա, ըզգի ապանի.
Թէ բարիւ չ՚տամ, ընցնիմ էրթամ՝
Ասա քեսաֆիր ըզգի տ՚սպանի։
Բարիւ խուս, ընցաւ նիրս։
Համոզ բարիւ տուց. Դաւիթ կանչից՝

«Ընչ մօրէն մէկնէր էր մընչիւ յասօր՝

---

1) Գրչով։ 2) Թաս։ 3) Գզած։ *) Էրգ է։
4) Դարբաս։ 5) Խուց կամ կէսլ նշան. վէրք, ցաւ, վիշտ։

«Ս՛արդիւ բարիւ չբր տբւի·
«Յասօր զՀամոօլն իմ՝ տեսի,
«Հախու զբարիւն իմ՝ տբւի *)։

Համոօլ դարձաւ էսաց՝
«Ասի [1]) քեռասուն տարի կայ
«Ստայ [2]) գարգահութին [3]) կէնիմ՝
«Ս՛արդիւ բարիւ չբր տբ.
«Յասօր զԴաւիթն իմ՝ տեսի,
«Հախու զբարիւն իմ՝ տի **)։

Դաւիթ էսաց՝
Չէ՝ ան իմ հախուն բարիւ տուից,
Թբզ իս էլ անու հախու բարիւ տ՛էր։
Ցզէ [4]) սուն տուից յէռջիւ Դաւթի սրտի՞ն։
Դաւիթ գնաց յէռջիւ փանջարին.
Ամանդիւթ խաթուն զԴաւիթ տեսաւ։
Եօթ ֆէրբզ իրիք՝ տարի կայ
Ստաց ադաեզ՝ խնձիւր մի մէկի չիտու.
Մնձիւր էթալ Թբլօր Դաւթին։
Էդ ֆէրբզնիր ըսին՝
Մինք յիրիք՝ տարի կայ ասաեզն ինք՝
Մնձիւր մի մէկի չէտու,
Էթալ խնձիւր Թբլօր Դաւթին.
Թբլօր Դաւիթ գնայ ասաեզ՝
Սարխոշցինք [5]), զարկինք սպանինք։
Ամէն մէկ իրեն թուր քէշից իդի սու ֆրի [6]) տակ։
Դաւիթ գնաց վիր՝ մբտ ֆէրբզնիր նստաւ։
Կբթխէմ էրկու տբւին՝ Դաւիթ էսաց՝
Ադպէս մի՛ տէք՝ սրտով տբւէք։

---

1) Ասա։
2) Այսաեզ։
3) Դռնապանութիւն։
4) Ցօղ—ցօրնի կոթ։
5) Աբբեցնենք։
6) Սփոռց։
*) և **) Երգեր են։

Սրտով խմեն, հօթն էլ պառկան ադաղ։
Դաւիթ էսաց՝ խզամ [1]),
Էրի սուֆրէն վիրո՛ւ,
Նա խաց մեղք՝ ի,
Յէռջիւ ձեռ ոտաց կ՚կոխին։
Ղզամ էրի սուֆրէն վիրուց,
Դաւիթ տեսաւ՝
70 Յէռջիւ ամէն ֆէրըզին թուրմ կայ.
Դաւիթ ձեռ իտու ժողվից,
Սխկրտից [2]), էսաց՝ առա՛, լի՛ց խուրջ վի [3]),
Տարիմ մի [4]) ձիուն նալ-բզմար [5]) խերիք՝ է։

Դաւիթ Ֆնաց ադաղ մընչիւ յառաւօտուն։
Ղանդիւթ խաթուն վիրուց էկաւ վի՝
Տ՚վըլացուէր.
Դաւիթ զիրկ էրի բիւլիւր՝
Տ՚պագնէր.
Ղանդիւթ խաթուն բոցքիմ էզար
80 Դաւթի քինթ բերան.
Ինչ յաղբիւր ջիւր կը թըլէ,
Ընցկում արուն Դաւթի բերնէն էթալ։
Դաւիթ էսաց՝ Ղանդիւթ խաթուն.
Ցուխտ ըլնը վրր իմ խոգիւն՝
Մ՚ընչիւ իս իմ փոխ չէնիմ [6]),
Ձքի ասաղէն չ՚ասնիմ։
Դաւիթ քուլախ [7]) առից վի
Էսաց՝ օղորմած Աստուած,
Քեանիմ ասաղ էրկինք կը ճրլվըլան,

---

1) Ծառայ։
2) Կոտրատեց։
3) Խուրջինի մէջ։
4) Մեր։
5) Պայտ-մեխ։
6) Փոխարէնը չ՚հատուցանեմ։
7) Գլուխ։

90 Ընցկում չադրը-խէվմի զարկին
Ղանդիւթի խաթունի խօր քեաղքի բիւլիւբ։
Ամէն էլ Ղանդիւթի խաթունի խօր գիւշման իլնին։

Բ.

Առաւօտուն Դաւիթի էլաւ վի՛
Ինչ խնդիրք՝ էրի՛, իրեն խնդիրք՝ կատարվի՛։
Էլ վո՞վ տ՚էրթայ կռիւ՝ վո՞վ չ՚էրթայ կռիւ՝
Ով Ղանդիւթի խաթունի խնձիւբ առի՝
Էն տ՚էրթայ կռիւ։
Դաւիթ գնին խնձաւ՝ գնաց կռիւ։
Ընցկում մարդ սպանից
100 Էլաւ էրընէ խեղեդ։
Լէշիր իցկից մէջ տարաւ։
Իրիք՝ օր՝ իրիք գիշիր էլաւ՝
Դաւիթ գնացէ կռիւ։
Ղանդիւթի խաթունի սի՚րա վառուաւ։
Էսաց՝ տ՚էրթամ Դաւթի լէշ անունց լէշիրուց
ջոկիմ բիրիմ՝։
Դաւթի լէշ խաչ պատրազին
Գնոյ վար Դաւթի աջ թեւին։
Էլաւ մարդանակ [1]) շուր խագեաւ։
Ճակիր կապից՝ ձին խնձաւ։
110 Ըռըմ բանից ուր ձեռ՝ գնաց։
Ցեսաւ՝ ընցկում մարդ սպանած՝
Իլի էրընէ խեղեդ։
Լէշիր իցկի մէջ՝ կ՚տանը։
Ղանդիւթի խաթուն ըռըմ կ՚զարկի
Լէշ կ՚վիրուցի՝ կիրիշկի՝
Կրսէ՝ Դաւթի լէշ վորն ի՝

---

[1]) Տղամարդի։

Մաչ պատարագին գնոյ վար աջ թևին,
Դաւթի լէշ անուանց լէշերուց Ջոկիմ։
Խանդիւթ խաթուն ոբմ կ'զարկի,
120 Լէշ կ'վիրուցի, կը թըլի։
Տեսաւ՝ մէկ ձիաւորմ զատու տեղէն [1]) կիգայ.
Տեսաւ՝ ձիաւորու աչքիր էրընից կարմիրցիր.
Դաւիթ կանչից, էսաց՝
Յետիւ ան մարդիւն ինչ տիւ կան կը գեսաս,
Իրիք՝ օր կայ սպանիր իմ.
Տիւ ասօր յետուէն կան կը գեսաս։
Դաւիթ մօտացաւ, Խանդիւթ խաթուն ըռբմ էզարկի,
Դաւիթ գնորգմ ափից վրը Խանդիւթ խաթունի սրտի՛ն,
Զիւց իրի տակ.
130 Դաւիթ ձիւց թռաւ տակ,
Զոքիր էզար Խանդիւթ խաթունի սրտի՛ն։
Խանդիւթ խաթուն էսաց՝
Ասաբծու սիրուն իլնը, իս յատմաթ [2]) իմ։
Դաւիթ էսաց՝ իս գիտիմ՝
Տիւ Խանդիւթ խաթուն իս.
Ես ան աւուր փոխ,
Ինչ տիւ բանցքի զարկիցիր իմ քինէն բերան.
Դաւիթ էսաց՝ իլի էրթանք տուն։

Գ.

Էկին տուն. առաւօտուն էլան,
140 Խանդիւթ խաթուն տէց
Իրի յէոջիւ Զըմշկիկ Սուլթընի փանջարին,
Ինի տ'ընցնէր՝
Զըմշկիկ Սուլթան զԴաւիթ տեսաւ,
Զըմշկիկ Սուլթան էսաց՝ Թրլօր Դաւիթ,

---

1) Հեռուից։ 2) Պէն տրմատ։

Տիւ ահտ էրիր ըզգի ա՛առնէր։
Ս՛ինք մասնիքնիր խատ իրարու փոխիր ինք՝
Տիւ վար ձի [1]) ինի գնացիր Խանդիւթ խաթուն րիրիր։
Տըգեաս սդայ [2])։ իս տիւ կոիւ մ՛էնինք։
Թէ տիւ ըզգի սպանիցիր՝
150 Խանդիւթ խաթունի ծուց պառկի։
Թէ իս ղքի սպանիցի՝
Ես էլ։ Խանդիւթ խաթուն էլ
Թըզ կենանք որբաւարի։
Դաւիթ էսաց՝ ասօր մարդ կայ խա ձի [3])։
Ցարմատ կայ խա ձի։
Ընչ իմ եօթ օր լըմանայ՝
Գեամ քիւ կոիւ։
Զըմշկիկ Սուլթան էսաց՝
Խաչ պատարաղին յերդըցի։
160 Դաւիթ էսաց՝ նա խաչ պատարաղին
Ընչ վար իմ աչ թեւին՝
Իմ եօթ օր լըմանայ
Ես գեամ՝ քիւ կոիւ։

Դաւիթ գնաց Խանդիւթ խաթունի ծուց պառկաւ։
Եօթ օր էր կաւլ էրի՝ [4])
Գնաց եօթ տարի։
Ասուաց աղէմ իսաւ։
Անուն իդի Ս՛հեր։



---

1) Ինձ արհամարհելով (բառացի՝ «իմ վերայից»)։
2) Այսուհետև։ 3) Ինձ հետ։ 4) Ուխտել։

ՄԱՅՐ·

Դառնամ զողորմին տամ Մելքսեթ քահանին
Դառնամ զողորմին տամ Սանասարին
Դառնամ զողորմին տամ Բաղդասարին
Դառնամ զողորմին տամ Մհերին
Դառնամ զողորմին տամ Թըրան-Դաւթին
Դառնամ զողորմին տամ Զէնեով Յովանին
Դառնամ զողորմին տամ Յըռան Վերգեոյն
Դառնամ զողորմին տամ Պարոն Ասաղին
Դառնամ զողորմին տամ ականջ էրողի խօր մօր խոզիւն։

Ա·

Յիւրիշի աղէք՝ ընչ տարէ կ՚ջիւջանեն՝
Մ՚հեր օրէ կ՚ջիւջանէր·
Մ՚հեր ջիւջացաւ ֆոայ էլաւ։
Ի՚էրթէր յեղէ կ՚խաղէր·
Տղէք՝ սրաով կ՚կայնացըցէր։
Քեաշոլ [1]) կ՚զարկէր յեղին՝
Էրկու խարիր ադայ յէոջիւ յեղին կ՚սպանէր։
Ճնարի ծառիր կը կոռէր [2])։
Տղէք՝ կ՚խեծուցէր վերէն։ թող կ՚ուէր՝
10 Ամէն մէկ կոդմ կը դպնի՚՚ն գեաի՚՚ն։ մեռնին *)։

---

1) Տե՛ս երես 4։ 2) Կը կռացնէր։

*) Ծանօր· Մ՚հերն գեաւ վերայ կամաւրջ կապելը և ճա-

Ինչման մարդիր գնացին մրա Դաւիթ
Ասացին՝ Դաւիթ, թէ տիւ ազայ քաղքէն ա՛կարիս,
Մի [1]) խաբար տու,
Մինք քեզաղաք բառնանք էրթանք։
Դաւիթ էսայ՝ ընչու խամար,
Մարդիր ասացին՝ Դաւիթ,
Գնա՛ քիւ ազէն տիս ինչ կէնը,
Դաւիթ յէլաւ գնաց, տեսաւ՝
Ծա՛իր կը կոսի, ազէք՝ կ'խեճուցի վերէն,
20 Թող կ'ասայ՝
Ամէն մէկ կողմ կ'դպնի՛ն գետի՛ն, մեռնին.
Ցղէք՝ սրաով կ'կոյնացնէ,
Քաշեղ կ'զարկը յեղին՝
Էրկու խարիր ազայ յէռջիւ կ'սպանի։
Դաւիթ սիլէմ [2]) էզարկ Ս՛հերի ականջի տակ,
Ս՛հեր քաշեղմ տիկց վրը խօր սրաի՛ն,
Խէր ազէն առին յէրուր,
Կռվան անտեղ։
Խաբար տարան Խանդիւթ խաթունին՝

նապարհորդներին ասղելը լինելը (ինչպէս պատմել է Նա-խոն), Զատիկ տեսելով, ուրիշ «նազբլի» է պատկանում, որը երեք ճիւղից է բաղկացած՝ ա. Բարակ Շախ, բ. Շիրին Շախ և գ. Դիւլեն Շախ (երեքն էլ մենք դրի առած ունենք)։ Անա՛ այդ տեղը՝ «Բարակ Շախ (թագաւորի մի գեղջկուհուց ծնած որդին) գնաց կարմանջմ գետի վերէն կապից ով էրթէր կարմանջի վերէն ընցնէր, չէր թողի՝ «էս կարմանջ կապիր իմ, տեն վերէն ընցնի՛ս»։ Մարդ կ'էրթէր կըռակը գիտ, Բարակ Շախ կ'էրթէր չէր թողէ, կըռէր՝ «տես գաս գետ, գետ գրի կ'տանի։ քեզ մեղք կընկնի իմ վրդ»։ Այս միջադէպը, թատրոնական լինելով ընդհանուր հնդեւրոպական ազգերի աւանդութեանց մէջ, ամենայն հեշտութեամբ կարող է ընտելանալ այս այն հերեսթին։

[1]) Մեղ։ [2]) Ապտակ։

30 — Ղանդիւթ խաթուն, խէր ադէն կը կովին։
Ղանդիւթ խաթուն էլաւ իրի։
Իրի տեսաւ՝ խէր ադէն ընկկուտ կովաց՝
Էրբնի մէջ լեռ կ'ատան։
Ղանդիւթ խաթուն կանչից՝

«Մ'հեր՝ մր զարկի։
«Տաց Մ'հեր՝ մր զարկի
«Մի [1]) թուխ մուրուսին *)։

Մ'հեր չի գիտը՝ թուխ մուրուսի տուն գիւրը [2])։

«Դաւիթ՝ մր զարկի։
40 «Դաւիթ՝ մր զարկի
«Մի նորալիւկ մէկ տակ մանուկին *)։

Դաւիթ չ'զարկի՝ Մ'հեր կ'զարկի։
Ղանդիւթ խաթուն կանչից՝

«Սարիր՝ հընդաթ գէք [3])։
«Զիւրիր՝ հընդաթ գէք
«Ղէր ադէն մէ մէկից բաժանէք *)։

Սարիր ձիւրիր հընդաթ կը գան։
Սարիր ձիւրիր հընդաթ չըն իդեայ։
Ղանդիւթ խաթուն կանչից՝

50 «Ասաուածն իմ կանչիր՝
«Հրաման Էնէր Դեարբէլ հրիշտակ վար իջնէր։
«Ղէր ադէն մէ մէկից յիտ կառէր *)։

---

[1]) Մեր։
[2]) Ո՞բաեղ է։
[3]) Օգնութեան հասէք։
*) Երգեր են։

Ասծու հրամանով Դեպրիկ հրիշտակ վար իջաւ,
Խսկը ապէն մէ մէկից յիտ կառից,
Ինչպ տիւ ձեռ տաս
Երկու ուլ մէ մեկից յիտ կառիս։
Դաւիթ էսաց՝ օղորմած բարերար Աստուած,
Հրաման էրիր Դեպրիկ հրիշտակ վար իջաւ.
Դեպրիկ հրիշտակ, տիւ Ս՝հերի քեսակի էրակ քէշիս՝
60 Անու ժառանգ չընկնի տիւս.
Անու մախ չ՝տաս
Մընչիւ Քրիստուս գեայ դատաստան։

Մ՝հեր ըռըկաւ, գ՝նաց Խլամայ քեսդաք՝.
Ռեատսուն ազատ լաճ,
Ռեատսուն ազատ ապչիկ տուց նստից,
Ծօթ տարվան նըռան գինին իպի խման։

Բ.

Դաւիթ մաղդէն էրաւ, էսաց՝
Ասիկ մատմ էրէխէմ իր՝
Ըզպի բէնամուս [1]) էրաւ։
70 Դաւիթ էլաւ գնաց տուն.
Դլեոխ կոտից, կ՝մոնէր նիրս՝
Աչ ընկեաւ խաչ պատարագին
Տեսաւ՝ խաչ պատարագին վրը թեւին սեցի։
Էսաց՝ ասիկ չէր տպի գարրիր [2]),
Ասիկ խաչ պատարագին էր ձի կ՝գարկէր։
Դաւիթ էսաց՝ խրօղբէրնիր,
Տիւ կացէք՝ բարեով,
Ես տ՝էրթամ գալս Զըմշկիկ Սուլթան։
Դաւիթ էլաւ գնաց
80 Զըմշկիկ Սուլթանի քեսդքին մօտացաւ։

---

[1]) Ընդատիւ։ [2]) Հարատածներ։

Զըմշկիկ Սուլթան զԴաւիթ տեսաւ՝
Գիւթնի խուփ էթալ քիրէն [1]), կարմրըցաւ։
Դաւիթ էսաց՝ շուրիրս արուենուտի,
Մըտնիմ հաւուզ [2]), լեռղկանամ,
Նուրէն յէլնիմ կռիւ էնիմ։
Դաւիթ շուրիր էխան,
Մտաւ հաւուզ, լեռղկացաւ, տիւս էլաւ.
Զըմշկիկ Սուլթան գիւթնի խուփ կրակէն էխան,
Էզարկ Դաւթի քեամակ՝
90 Սի՛՛րտ ինի էտու տիւս։
Դաւիթ մեռաւ։
Ջուհաք տարան Խանդիւթ խաթունին՝
Դաւիթ սպանիցին.
Խանդիւթ խաթուն էլ Դաւթի կսկծուն մեռաւ։

Գ.

Ցրռան Վերգեռ Զէնեով Ցեռվան ըսին՝
Ի՞նչզ տ՛ենինք՝ Զըմշկիկ Սուլթան տ՛գեայ
Սասմայ խոզ-քեար տ՛օղողը տանը։
Զէնեով Ցեռվան էսաց՝ չէ մի Մ՛հերմ կէր,
Անմէն [3]) խըտ խօր կռիւ էրաւ։
100 Ցրռան Վերգեռ էսաց՝
Զընք գիտի՝ ո՞ր տեղն ի.
Զէնեով Ցեռվան էսաց՝
Ըլնինք նա սարի գլեռխ
Կանչիմ, որտեղ ըլնի՝ տ՛ակախի։
Էլան գնացին սարի գլեռխ,
Զէնեով Ցեռվան կանչից՝

---

1) Քուրայ։ 2) Շատրուան։ 3) Այնքան։

«Տա՛ Մհեր, տիւ խմի,
«Տա՛ Մհեր, տիւ խմի
«Ընդուան գինին.
«Ընդքիւ խէր սպանած,
«Ասօր ըզեօթն ինք էրի։

Մհեր էսաց՝ ազապ լաճի՛ր, ազապ ապչկտի՛ր,
Դինջ [1]) կացէ՛ք, իմ խրօղբեօր ձէն կուգեայ

«Զէնիկմ կ'գէր, ջըմ գրաի՝
«Ցերաւիլն էր թէ յերամուան էր,
«Ջըմ գրաի՝ հարաքա՛ էր թէ հուսուսայ էր։

Խրօղբէր գարձաւ էսաց՝

«Մ'ընչ [2]) հուսուսայ էր,
«Մ'ընչ հարաւայ էր,
«Մ'ընչ յերամուտ էր,
«Մ'ընչ յերաւիլ էր,
«Ընդքիւ խէր սպանած,
«Ասօր ըզեօթն ինք էրի։

Մհեր էսաց՝ ազապ լաճի՛ր, ազապ ապչկտի՛ր,
Տիւք կերէ՛ք, խմեցէ՛ք
Զի խամար ջմբիւշ էրէ՛ք [3])
Ես տ'էրթամ, իմ խրօղբեօր ձէն կուգեայ։
Մհեր էլաւ էկաւ խրօղբէրնիրու մօտ։
Մհեր էսաց՝ խրօղբէրնիր, ի՞նչ իլի.
Զէնեով Ցեսվան էսաց՝ քիւ խէր սպանած,
Քիւ մէրն էլ մեռի,
Ըմշկիկ Սուլթան գեախ ի գեայ
Սասմայ խոզ-քեաբ ա՛օղողը տանը։

---

1) Հանդարտ։ 2) Ա՞էջ։ 3) Զուարճացէք։

Մ'հեր էսաց՝ խրօղբէրնիր, էրթանք։
Էլան գնացին ճամբէն մէջ,
Տեսան՝ պառաւմ թումբան խանի
Թըլի վըր թիւքիրուն,
Մածնաթըթախ շիրիփ բռնի ձեռ, կուգեայ։
Մ'հեր էսաց՝ պառաւ, դիւ՞ր տ'էրթաս.
140 Պառաւ էսաց՝ ան գրեողուդ Մ'հեր
Զի եօթ լաճ սպանի։
Տ'էրթամ էրկու նա շիրիփով տամ վար գլխուն
Սպանիմ, ասքեար չը գեան սպանին՝
Իմ սի՞ր խոմեայ։
Մ'հեր ձեռմ իտու զան [1]) ոտ,
Ոամ իդի մէկէլ ոտաց վերէն
Պառաւ ճիւրից [2]), էթալ անտեղ։

Էլան գեացին քեաղքին մօտ խասան,
Մ'հեր էսաց՝ խրօղբէրնիր,
150 Տիւն տ'էրթէք՝ դախ քեաղաք՝
Թէ դախ ասքեար։
Խրօղբէրնիր մտածիցին, ըսին՝
Էրթանք դախ ասքեար՝ ասքեար շատ ի,
Էրթանք դախ քեաղաք՝
Քեաղաք՝ ծանտր ի,
Զընք կենայ աւերի։
Մ'հեր էսաց՝ ամէն մէկ էրկու դիր
Ըզգի կը կշռէք՝.
Ես ձի էրկուս խրկիմ կողմ,
160 Ես մեակ կողմ կ'էրթամ,
Զիր սրտով չի։
Խրօղբէրնիր ըսին՝

---

1) Նորա։ 2) Ճղեց։

Մ՚ինք ա՚էրթանք գախ քեսազաք՚,
Խրօղբէրնիր գնացին գախ քեսազաք՚։
Մ՚հեր էլաւ ճնարիմ ծառ մզեզախառ [1]) քէշից,
Ոդի վար ուր թեւին,
Գնաց ապքարին խառաւ,
Աջու էզար, ձախու էզար,
Նա ֆէրբզ էթոզ, նա փահլուան *) էթոզ,
170 Նա Զըմշկիկ Սուլթան,
Ամէն էլ սազարկից [2]), իրի։
Էսաց՚ ա՚էրթամ տեսնամ
Ում խրօղբէրնիր ի՞նչ էրաց։
Մ՚հեր գնաց տեսաւ՚ քեսազաք՚ ուրաց,
Մնացի մէկ կատու, թոի նմիրի [3]) ծէր,
Դազրաց կիրիշին [4])։
Մ՚հեր ճնարիմ ծառ քէշից
Էզար կատուն իրի տակ։
Մ՚հեր էսաց՚ խրօղբէրնիր, էրթանք մեր տեղ։
180 Էլան գնացին Սասմայ քեսազին մօտացան։
Ցռան վէրգեռ Զէնեով Յեռվանին էսաց՚
— Մ՚ին ապրէր ուն իս,
Քի որդի չկայ,
Մ՚հեր տանիս էնիս քի որդի,
Թէ իս տանիմ էնիմ ձի որդի։
Անիկ կարիճ [5]), շախոզ [5]) կըզը [6]) զան տիրը։
Զէնեով Յեռվան էսաց՚ ձի որդի չկայ,

---

1) Արմատով։

*) Ոբբան մեզ աջողեցաւ խմանալ՚ ֆէրբզ և կորիճ նշան. առհասարակ «քաջ», իսկ «փահլուան»—անտոմոր այժ ունեցող։

2) Ապանեց։ 4) Հօրեղբայրները։

3) Մինարայ։ 5) Պահոզ։ 6) Պէտք է։

Ես տանիմ էնիմ ձի որդի *)։
Զէնով Յովան տարաւ էրաւ ուր որդի **)։

Դ.

190 Կնիկմ կէր անուշ, անուն Սառեայ։
Աչ ընկեաւ Մհեր՝
Սի՛րտ վրը Մհերին աւրաւ։
Ասաց՝ ա՛զեաս խատ իմ ձեռաց։
Մհեր էսաց՝ տիւ իմ խրօղբեօր կնիկն իս։
Տիւ իմ մօր տեղն իս։
Ես չըմ իգնայ խատ քիւ ձեռաց։
Ասաց՝ էրթանք՝ իմ գլեուխ վրա։
Մհեր էսաց՝ էրթանք։
Էլան Ջիւր տուին, գնացին։
200 Կնիկ իրեն շուրիր էխան նստաւ,
Ասաց՝ Մհեր, Ջիւր լից վըր իմ գլխուն,
Իմ գլեուխ վրա։
Մհեր ձեռմ իգի աչիչ,
Մէկէլ ձեռնեով էլ Ջիւր էլից։
Կնիկ տեսաւ՝ ձեռմ գրի աչիչ,
Մէկէլ ձեռնեով Ջիւր կը լցի։
Տէմ վի կայնաւ,
Շուրիր խաղեաւ, շապկի փոդդատ ձգից,
Մապիր էրանից վար ուր գլխուն,

---

*) Ծանոթ.—Նախօրի պատմած վարկանակ մէջ Զէնով Յովան, Դաւթի մահից յետոյ, արտաքսում է Մհերին տանից, և հակառակն՝ Դաւիթ, որը մնալով, որդեգրում է, ինչպէս այստեղ Մհեր, ոչով և ոկուում է նպալը։

**) Ծանոթ.—Այս ամբողջ հատուածը՝ Մհերի և իւր հօրեղբայրների կռիւը Զըմբչկիկ Սուլթանի հետ բացակայ է (բացի պատուի հետ ունեցած գէպքից) պ. Աբեղեանի մօտ։

210 Իրիս արընթընթախ էրաւ,
Էլաւ գնաց տուն,
Մ'աղդէն էրաւ, նստաւ ադտեղ.
Մհերն էլ մաղդէն էրաւ
Գնաց մըչ քեաղքին,
Զէնեով Ցեովան էկաւ տուն
Տեսաւ՝ կնիկ մաղդէն էրի, նստի ադտեղ,
Մ'աղիր էրանի վըր ուր գլխուն,
Շապկի փողպատ ծղի,
Իրիս արընճապաղ էրի։
220 Էսաց՝ կնիկ, ադ ի՞նչ իլի քի։
Կնիկ էսաց՝ իս կըսէր՝
Տիւ ձի որգիմ իս բիրի,
Իս չըր գըտը՝ թէ տիւ ձը իրիկմ իս բիրի։
Էսաց՝ յիրկուն տիւռ կ'շինինք վերէն,
Զընք թեողնի նիրս գեայ։
Ցիրիկուն տիւռ շինիցին.
Ցիրիկվան Մհեր էլաւ տուն էկաւ
Տեսաւ՝ տիւռ շէնած ին.
Մհեր կանչից՝ խրօղբէր, տիւռ բաց.
230 Խրօղբէր տիւռ կ'բանայ,
Խրօղբէր տիւռ չէբաց.
Մհեր էսաց՝ խրօղբէր,
Տիւ բիւզէ խաբած իս,
Մկայ կէրիմ ադիւցմ տամ՝
Քիւ բիրդ՝ քիւ կնիկ էրթէք՝ յանդիւղք՝.
Խօրախուտ խրօղբէր իս,
Խըտ խօր կռիւ էրը, կուշտ չ'կերայ,
Խըտ խրօղբեօրն էլ չըմ էնի *)։

---

*) Ծանօր. — Պ. Աբեղեանի մօտ Սառիայի (Զէն. Ցով. հնոջ) տուփանքի առարկան լինում է Դաւիթ։ Ըստ մեզ՝ այս սիրահարական դէպքը աւելի յարմարւում է Մհերին,

Մհերն էլաւ գնաց
240 Լալելէն նստաւ վրը խօր գերեզմընին
Կանչից՝

«Տա՜ խէրիկ, ինչդ էնիմ,
«Տա՜ խէրիկ, ինչդ էնիմ,
«Սասմայ քեռաղքէն բէհրահը խանած [1]),

Ասրծու հրամանով ձէն ընկաւ խօր գերեզման.
Լսաց՝

«Ո՛ւրդի, գացի մըջալը [2]) ձեռնիս,
«Թափի մաղիրն իրիսիս,
«Գնա՛ Հալաբա՜յ քեռաղաք՝
250 «Քիւ խաց թխուկ ի,
«Քիւ եմակ [3]) էփուկ ի։

Ընցկում էլաց, էլ ձէն խօր գերեզմընէն չ՝էլաւ.
Լալելէն գնաց նստաւ վար մօր գերեզմընին՝

«Տա՜ մէրիկ, ինչդ էնիմ,
«Տա՜ մէրիկ, ինչդ էնիմ,
«Սասմայ քեռաղքէն բէհրահը խանած *)։

Մէր կանչից՝

«Ո՛ւրդի, գացի դաւրանը [4]) ձեռնէս,
«Թափի մաղիրն ի գլխէս,
260 «Գնա՛ Հալաբա՜յ քեռաղաք՝
«Քիւ յեոդէն աւլուկ ի,
«Քիւ ջրլիր [5]) պարզուկ ի *)։

որի տանից արտաքսուելու պատճառը մեզ լիովին պարզ ում է։

1) Արտաքսուած։ Երգ է։
2) Ժամանակ։
3) Ուտեստ։
4) Ժամանակ։
5) Անկողին։
*) Երգ է։

Ընցկում էլաց վըր մօր գերեզմընին,
Էլ ձէն մօր գերեզմընէն չէլաւ։
Բարի լիւս իրի վար ձի, վար Մհերն էլ.
Մհեր էսաց՝ օղորմած բարերար Աստուած,
Ես ի՞նչ գիտիմ Հալաբա՛յ քեազաք՝ որտեղն ի.
Իմ խէ՞ր գեոյ [1]) Հալաբա՛յ քեազաք՝,
Իմ մէ՞ր գեոյ Հալաբա՛յ քեազաք՝,
270 Զի վո՞վ կայ Հալաբա՛յ քեազաք՝՝
Ես էրթամ Հալաբա՛յ քեազաք՝։

Ե.

Մհեր ուր ձին խեծաւ, գնա՛ց,
Շատ քիչ, Աստուած գիտը,
Գնա՛ց մընչ մէկ դաշտին.
Տեսաւ՝ քեարմ մընչ ըդը դաշտին,
Բիրդմ շինած էդ քեարի գլեոխ,
Պառաւմ նստի աղայ քեարի տակ
Հաց կ'թխի.
Ձախ ծիծ թըլի վըր աչ թևին,
280 Աչ ծիծ թըլի վըր ձախ թևին,
Ինչ շան լակուտ՝ անու ծըծիր
Վըր անու թիւքիրուն յէրուր կառնին։
Մհեր էսաց՝ օղորմա՛ծ Աստուած,
Ես մատմ էրէխայ իմ,
Որտեղ էրթամ, կաղայ [2]) տ'գեայ իմ յառաջ.
Թէ ըզզի ասքեարայ էնիմ [3]) վըր պառուն՝
Վախնամ՝ պառաւ ըզզի ուտի.
Ըզզի ասքեարայ չէնիմ վերէն,
Ընցնիմ էրթամ՝ տ'ըլնը խուց [4]),

1) Կայ։
2) Զարկք։
3) Ցայց տամ։
4) Վիշտ, վէրք։

290 Ինկնի իմ սի՛րտ, ըզգի սպանի.
Մէկ կռիւմ ձի ռաստ գեայ,
Ես տ՚ասեմ՝ իս պառուն վերէն չ՚կերցայ,
Ես ի՞նչզ կռիւ տ՚էնիմ;
Մհեր էսաց՝ թէ զասքեար էնիմ վերէն,
Անու ծծիր բռնիմ, զան զաՀթ էնիմ,
Թէ չիսօ չրմ կենայ զան զաՀթ էնի։
Մհեր ձեռ էթալ
Պառուս ծծիր քեամից՝
Արուն արընչիւր ծծիրուց էթալ.
300 Պառաւ էսաց՝ Աստրծու սիրուն ըլնը,
Ցիւ ծրծիր թըզնիս,
Ես լսիր իմ՝ զԴաւիթ սպանած,
Ասիկ Դաւթի զարմէն է.
Դաւթի զարմէն չ՚իլնը՝
Մարդ էսենց իմ ծծիր չի քեամի։
Եօթ տարի կայ Հալաբայ թագաւորը
ՁԴեռհար խաթուն կուղը՝ չրմ տըւի.
Ցամ քի՝ իմ ծծիր թուղ։
Մհեր զծրծիր էթող՝
310 Էլան գնացին բիրդ։
Պառաւ զԴեռհար խաթուն իտու Մհերին՝
Պատկից վար Մհերին *)։

Թէ տարիմ էրկու մնաց՝
Պառաւ մեռաւ.

---

*) Ծանօթ.—Պ. Ալեքսեանի մօտ չէ յիշւում Մհերի պըտակուելը Գոհար խաթունի հետ և սոցա կռիւը Հալաբայ թագաւորի դէմ. այնտեղ Մհերը, պառաւից բաժանուելով, առանց առիթի գնում դառնում է «տէրտէրուչ մշակ» (երես 56).

ГРОДСКОЙ ПАЗАРЕТЪ • МОСК. АРМЯНСК. ОБЩ

Թագեաւուր լսաւ՝ պառաւ մեռաւ,
Թագեաւուր ասքեար կապից
Դրի վար Մհերին։
Մհեր բիրդէն կ'էլնէր,
Մընչիւ խազար ասքեար կ'սպանէր.
320 Կ'էրթէր մանէր բիրդ,
Ինք Գեոհար խաթուն ջմբիւշ կ'էնին։

Զ.

Օրէն մէկ Թագեաւուրի մարդիր ըսին՝
—Թագեաւուր ապրած կենաս,
Սասմայ տեղ փահլիւան կիլնը.
Խըրկը Սասմայ տեղ փահլիւան գեայ
Աս մարդ յաղդի, գքիւ կնիկ բիրինք։
Թագեաւուր խրկից Սասմայ տեղ
Մրա Զէնեով Ցեովան, էսաց՝
—Զէնեով Ցեովան,
330 Մէկ մարդմ միր թագեաւուրի կնիկ գաֆթ էրի, չիտայ,
Մէկ փահլիւանմ տաս, գեայ ան մարդ յաղդի,
Միր Թագեաւուրի կնիկ բիրինք,
Նօթ քեաղաք՝ քի բաշխիշ տանք։
Զէնեով Ցեովան յէլաւ
Դաւթի ձին Թիւաւուր իրի,
Թուր կէծակին էլ իրի,
Էտու ուր տղին։
Պարոն Աստղիկ յէլաւ
Թուր կէծակին կապից,
340 Ձին Թիւաւուր խեծաւ,
Կէսօրին գնաց Հալաբայ քեաղաք։

Մհեր խրօղբեօր խուտ տուից,
Տաղդէն էրաւ, իրիկուն բիրդ գնաց,

Գնաց նստաւ. Գեոհար խաթուն տեսաւ՝
Մհեր մաղդէն էրի՝ չը խօսայ՝
Գեոհար խաթուն էսաց՝
—Մհեր՝ ասօր ընչու չըս խօսայ՝
Մաղդէն էրիր իս.
Էլ օրիր տիւ կ'գէր՝ խօսէր՝
Կը տէր՝ կառնէր՝ կուրախանէր՝
Ասօր ի՞նչ իլի քի՝ տիւ չըս խօսայ։
Մհեր էսաց՝
—Իս առաւօտուն չըմ էրթայ։
Գեոհար խաթուն էսաց՝
Տիւ վար քի կառնիս՝ չ'էրթաս կռիւ՝
Իս կ'էրթամ կռիւ.
Մհեր էսաց՝ տիւ կ'էրթաս՝ կը նստիս՝
Ինչ կէնիս՝ էրա՝
Իս առաւօտուն կռիւ չըմ էրթայ։
Առաւօտուն Գեոհար խաթուն էլաւ վի
Էսաց՝ Մհեր՝ իլի գնա՝ կռիւ.
Մհեր էսաց՝ չըմ էրթայ կռիւ.
Գեոհար խաթուն էսաց՝
—Տիւ չ'էրթաս՝ իս կ'էրթամ։
Մհեր էսաց՝ կ'էրթաս՝
Տիւն էլ կը նստիս աստեղ՝
Քիւ քէֆն ի։
Մհեր էսաց՝ թէ տիւ իլնիս փանջարէք՝ կուծիս
Մ'ընչիւ իս կըռուց գեամ՝
Կ'էրթամ կռիւ.
Թէ չիս՝ չըմ էրթայ։
Գեոհար խաթուն էսաց՝
Շատ աղէկ ը՝
Իս փանջարէք՝ կը կուծիմ
Մ'ընչիւ տիւ կըռուց գեաս.

Ասար ճրագ՝ կը վառիմ։
Գեոհար խաթուն էլաւ փանջարէք՝ կուծից։
Ճրագ՝ վառից։
Մհերն էլ էլաւ
380 Ուր մատալ [1]) իրի վար ուր գլխուն։
Ուր նիտ անեղ բռնից ուր ձեռ։
Էլաւ դնաց մէգան կայնաւ։
Պարոն Ասաղիկ ձին թիւաւուր խնծաւ
Իրի Մհերի կռիւ։
Վար Մհերկէ գլխիւն ինի
Կ՝էրթայ կուգեայ։
Թուր կ՝շարժի վար մատալին։
Բիւռ բիւռ կրակ կը լցուի վար մատալին։
Մատալից շուռ կառնի գետի՛ն։
390 Կ՝էրթայ յանգիւղք։
Թրի շառաւիղք՝ իտու փանջարին։
Դնաց մէջ տախտին [2])։
Գեոհար խաթուն էսաց՝
Ասար ամպ չի—կկծակ կ՝տայ։
Ասիկ ի՞նչ շառաւիղք՝ ի
Կ՝տայ մեր տախտի մէջ։
Գեոհար խաթուն էլաւ փանջարէք՝ էրաց
Տեսաւ՝ մէկմ ձին թիւաւուր խնծի։
Վար Մհերկէ գլխիւն կ՝էրթայ կուգեայ։
400 Թուր կ՝շարժի վար մատալին։
Բիւռ բիւռ կրակ թրից կը լցուի վար մատալին։
Մատալից շուռ կառնի գետի՛ն։
Կ՝էրթայ յանգիւղք։
Գեոհար խաթուն էսաց՝
Մհեր ասու խամար չէր էրթայ կռիւ։
Ես չբր գիտը ընչու խամար չէր էրթայ։

---

1) Սաղաւարտ։ 2) Սենեակի յատակը։

Գեոհար խաթուն գիրք՝ իդի յեռջիւ
Կարդաց՝ տեսաւ խրօղրէրն ի։
Կանչից Հսաց՝

410 «Խրօղրէր՝ տիւ էկիր բարեով՝
«Խաղար բարեով՝
«Թափիցիր կրակ վար Մհերի դօտին՝
«Ա՛րիցիր ըզտուն Գեոհարին *)։

Զէն ընկեաւ Մհերկի ականջ՝
Մհեր Հսաց՝
Աղուրթ [1]) կնկեան ազգուն բաղդ չ՝կեայ.
Իս ասը՝ փանջարէք՝ կուծիս
Մ՝ընչիւ իս կուուց գեամ՝
Ան էլաւ փանջարէք՝ էրաց։
420 Մհերն էլ կնկեան ըռրկուն
Նիա դէմ էրաւ ձիու փուր՝ էղարկ՝
Ձիու փուր ծակից՝
Գնաց Պարոն Աստղի դաղթ վի տիւս էլաւ՝
Պարոն Աստղիկ ձին վիրուց՝ ընկեան տակ։
Պարոն Աստղիկ Հսաց՝
Աստուած քիւ տիւն աւրի՝
Ես Մհերկի դաբրն էր ձի խասաւ՝
Մհեր չ՝էլնէր՝ իւրիշ մարդ ըղի չբր սպանը։
Մհեր Հսաց՝ Մհերկի դաբրն էր քի խասաւ.
430 Պարոն Աստղիկ Հսաց՝
Սասմայ ազգթն [2]) էն ի՝
Գլեխ գնին իրարու ծնկեան վիրէն՝
Խոզին տան։
Պարոն Աստղիկ ընչ խրատաց՝ խոզին իտու՝
Մհերկէ յաշ [3]) կսկծու գնաց՝

---

*) Երգ է։
[1]) Ճշմարիտ։
[2]) Սովորութիւն։
[3]) Ուշքը։

Ընկեաւ ադտեղ *)։
Ձիաւորքիր բարհաւան [1]) բիւլիւր Մհերկէն,
Մհեր ղընջլեով կապիցին,
Տարան թըլցին քեառսուն գեազ խուր,
440 Սալ դրին վար խուրու բերնին, էկին։
Ասքեար գնացին վար Գեոհար խաթունին կռիւ.
Գեոհար խաթուն բիրդէն կըլնէր,
Էրկու խարիր մարդ կը կտուէր,
Կ՝էրթէր մանէր բիրդ ինի **)։

Է.

Օրէն մէկ պառաւմ էսաց՝
—Նա մէկ ադչիկմ ունիմ,
Տանիմ թըլիմ մըտ Մհեր,
Մհերկէմնէ զաւակմ իլնը,

---

*) Նախոյն պատմելով՝ Պարոն Աստղիկ կռուում է Դաւթի հետ (երես 42—45), Մենք կարծում ենք, որ չենք սխալուի, գերադասելով այստեղ Զատիկի վարիանտը, այսինքն՝ Պարոն Աստղի Մհերի հետ կռիւ անելը, քանի որ վերջինս մեզ աւելի հասկանալի է և լաւ յարմարւում «նաղրլի» ներքին կապերի հետ։

1) Ժողովուեցին։

**) Ծանօթ.—Մհերի բռնուելը և հորի մէջ պահուելը շատ խուլ է պատմուած պ. Աբեղեանի մօտ. այստեղ կարդում ենք՝ «Քառասուն տարի անցաւ (Մհերի և Գոհար խ. հարսանիքից յետոյ), Գեոհար խաթուն մեռաւ։ Մհեր էլաւ զիւր ձին խեծաւ գնաց նէճիր անէր։ Նէճիրուանքտեր (որսորդներ) զՄհեր բռնեցին, տարան թլեցին խուր վէ» (եր. 57)։ Անշուշտ այստեղ յիշողութիւնը պատմողին դաւաճանել է. ինքը Նախոն, պ. Աբեղեանի ասելով, խոստովանել է, որ Մհերի ճիւղը բաւականաչափ մոռացել է և լաւ չէ յիշում։ Այդ մեզ ակներև է այստեղ առաջ բերած մի շարք համեմատութիւններից։

Մինք էլ անու սադաղէն [1]) իսցմ ուտինք։
450 Պառաւ էլաւ աղչիկ առից տարաւ։
Գնացին խուրու վերէն կայնան։
Սալ տարաւ դէն։ կանչից՝
—Մհեր՝ քի աղջիկմ իմ բերի։
Մհեր էսաց՝ բերիր իս։ բարեով իս բերի։
Կախի թըղ գեայ ըզգի արձկի։
Աղչիկ կախ էտու։ գնաց խուրու տակ։
Մհեր էսաց՝ ա՛ղչի։ ըզգի արձկի։
Աղչիկ զՄհեր արձկից։
Մհեր էլաւ։ ոտմ իդի վար աղչկան ոտաց։
460 Աղչիկ ճիւից։ էթալ անտեղ։
Մհեր շրէտ կապից ուր մէջք։ էսաց՝
— Մա՛րէ։ ըզգի վիր քէշի։
Պառաւ քէշից՝ Մհեր ծանար էր։
Պառաւ էսաց՝
—Մեռնիմ քիւ շնողքին [2])։
Նուր էր իջաւ մ՚օտ։
Ինչ շուտ ծանարացաւ։
Քէշից տիւս։ տեսաւ՝ Մհերն էր։
Մհերն էլ ձեռնիր էթալ խուրու թումբ։
470 Ջուր [3]) բաղկտիր գնաց մինչ խողուն։
Պառաւ իրի դախ Մհեր։
Միտք ունի՝ զՄհեր թըլէ խուր վե։
Մհերն էլ տիւս էլաւ խուրէն։
Ձեռ իտու զպառաւ։
Պառաւ էթալ խուրու տակ։
Սալ իդի վար խուրու բերնին։

---

[1]) Ցուսով։ [2]) Շնորհքին։ [3]) Մինչև։

Ը.

Մ'հեր գնաց էլաւ իրիցում տղայ։
Նորաթ բերին իրիցու վերէն՝
Էրէց տ'էրթայ կռիւ.
Էրէց կըսը՝ էրէց-քահանայ չ'էրթայ կռիւ,
Մ'արդ չ'տեսի էրէց-քահանայ էրթայ կռիւ։
Տղէն էսաց՝ խէրիկ,
Կ'էրթամ պախվեմ քեարիմ տակ,
Մ'ընչիւ յիրիկուն կըլնիմ կուգեամ։
Պէտք ի էրթամ կռիւ՝
Զըմ էրթայ կռիւ։
Մ'հեր էլաւ, ձին բիրին Մ'հերկին,
Մ'հեր էլաւ ձին խեծաւ,
Գնաց կռիւ։
Տեսաւ՝ վուզրի լաշ ձիմ խեծի,
Ճակիր կապի, կ'էրթայ,
Գեոհար խաթունի կ'մօտանայ,
Ցիտ կ'դառնայ.
Մ'հերն էլ սիլէմ էզարկ ականջի տակ,
Ձիուց իրի տակ.
Ձշուրիր խագեաւ, ճակիր կապից,
Ձձին խեծաւ,
Գնաց Գեոհար խաթունին կռիւ։
Գեոհար խաթուն տեսաւ,
ՁՄ'հեր ճանչցաւ, էսաց՝
—Մ'հեր, տիւ բարեով էկիր.
Մ'հեր էսաց՝ Գեոհար խաթուն, զարկ.
Կռիւ էրին մ'ընչիւ յիրիկուն.
Գեոհար խաթուն դարձաւ գնաց բիրդ,
Մ'հեր իրի քեաղաք։

Մ'հեր էծ մուրթից,

Անու կողաշարքնիր իրի բիւլիւր ուր մէջաց,
Գնաց տուն։
Ցիրիկուն զիրիցու լաճ տանին դիւան։
510 Առին տարին թագեաւուրի դիւան.
Ըսին՝ Իրիցու տղէն,
Ի՞նչդ կռիւ էրիր։
Էն մարդիր, ընչ զՄՀեր բռնիր ին, թըլիր խուր,
Սրաով նստած ին։
ՄՀեր կողաշարքմ ուր մէջքէն կը քէշէր,
Զանէր մէկ մարդիւ սրաի՞ վերէն,
Քեամակն կըտէր տիւս,
Զան մարդ կը սպանէր,
ՄՀեր կըսէր՝
520 —Իս ընցկընայ [1]) կ'զարկէր Գեոհար խաթունին։
Կողաշարքմ էլ մէջքէն կ'քէշի,
Կ'զարկի մէկէլ մարդիւ սրաի՞ վերէն,
Քեամակ էնի կըտէր տիւս՝
—Գեոհար խաթուն ասպէս կը զարնէր զի։
Ան մարդիր ամէն սրաով սպանից։
Իրիցու տղին բա՞մ չըն ըսը,
Կըսին՝ թէ Գեոհար խաթուն տ'բիրը։
—Իրիցու տղէն,
Տիւ առաւօտուն տ'էրթա՞ս կռիւ.
530 Էսաց՝ կ'էրթամ, կըտէք՞
ՄՀերկէ Քուռկիկ Ջալալին,
Պարոն Աստղին թուր կէծակին.
Կտէք՞—կ'էրթամ կռիւ,
Զըտէք՞—չըմ էրթայ *)։

---

[1]) Այսպէս։

*) Ծանօր.—Այս հատուածը բոլորովին բացակայ է Նախոյի վարիանտի մէջ, իսկ Հալաբայ թագաւորի հետ ունեցած կռիւը բաւականին համառօտ է պատմուած։

Թ.

Առաւօտուն թուր կէնճակին աբին.
Թուր կէնճակին կապից վերէն,
Քուռկիկ Ջալալին խենճաւ,
Գնաց կոիւ։
Կոիւ էրին մընչիւ կէսօրին։
Մհեր էսաց՝ Գեոհար խաթուն, փախի։
Գեոհար խաթուն փախաւ,
Մհեր յետաւէն գնաց,
Գնացին մտան բիրդ,
Կերան, խման,
Քէնֆ էրին մընչիւ յիրիկվան։
Մհեր էսաց՝ Գեոհար խաթուն,
Ես կ'էրթամ թագաւորին կըսիմ՝
«Գեոհար խաթուն իկի ռայի [1])։
Գեոհար խաթուն կըսը՝
Ան մարդ, ընչ կէրի զդէլ [2]) վիրիցի,
Գեա՛ իմ խել [3]),
Չ'գեան—ես չըմ իգեայ»։
Խել [4]) ընչ քեաղքէն կը խըլսի՝
Ես քեաղքէն կառիմ, տիւ բիրդէն,
Մընչիւ գեան՞ք խատնինք իրարու մօտ։
Մհեր էլաւ քեաղաք իրի,
Գնաց թագաւորի մօտ, էսաց՝
—Թագաւոր ապրած կենաս,
Գեոհար խաթուն իկի ռայի,
Ընչ մարդ կէրի զդէլ վիրիցի՝
Գեա՛ իմ խել.
Չ'գեան—ես չըմ իգեայ։

---

1) Համաձայնեց։ 3) Իմ յետևից։
2) Գդալ։ 4) Ծայրը։

Թագեաւուր Կսաց՝ շատ ապէկ ը.
Առաւօտուն իլի՝ քեաղքի մէջ ձէն տու՝
Լէն մարդ՝ ընչ կէրի գալէ վիրիւցի՝
Թըղ էրթա՛ խել՝
Առաւօտուն Մ՝հեր էլաւ՝
Գնաց քեաղքի մէջ՝
Ձէն Կտու—մարդիր ամէն էլ էիան՝
570 Գնացին խել.
Հիտք [1]) քեաղքէն խըլսաւ։
Մ՝հեր էլաւ քեաղքէն կտուից՝
Գեոհար խաթուն բիրդէն.
Գեոհար խաթուն Կսաց՝
Որ Մ՝հերկէ թրի տակէն ընցաւ՝
Ըրմ սպանը՝
Որ չընցնի՝—ա՝սպանիմ։
Ամէն էլ էկին
Մ՝հերկէ թրի տակէն ընցան։
580 Գեոհար խաթուն գնաց
Թագեաւուրի վիզ էզարկ։
Մ՝հեր թէ տարիմ թէ քսան տարի
Հալաբայ թագեաւորութին էրաւ։

ժ.

Գեոհար խաթուն արիւ իտու ձի [2])։
Գեատի՝ն ախթիարացաւ.
Մ՝հեր ձին կ՝խեծնէր՝ կ՝էրթէր կան կը գէր.
Ձին չուր փուր ինի կը խրուէր մինչ խոպուն։
Մ՝հեր Կսաց՝ օղորմա՛ծ բաբերար Աստուած՝
Հրաման էրիր Գեաբրէլ հրիշտակ վար իջաւ՝

---

1) Հետք։

2) Իւր արևը պարգևեց ձեզ՝ (վախճանեց)։

590 Զմախ չիտու՝ մընչիւ Քրիստուս գեայ դատաստան։
Գեաբրէլ հրիշտակ՝ ըզդի ի ցկիս Վանայ քեար
Մ'ընչիւ Քրիստուս գեայ դատաստան։

Գեաբրէլ հրիշտակ զՄ'հեր ի ցկից Վանայ քեար
Մ'ընչիւ Քրիստուս գեայ դատաստան։

Մէկ աղչիկմ կ'իլնը։ Մէկ մանղիլմ [1]) ձիւ կ'լցին՝ կ'տան աղչկան ձեռ՝ աղչկան կասին՝

— Ծա՛ր քեաւրուչ [2]) տուն։

Աղչիկ կէլնի չաւրէն կառնի կ'էրթայ Շաբաղու քեարի*) յէռջիւ։ կ'տեսնայ՝ տիւռ բաց ի։ աղչիկ կ'էրթայ ագաեղ։ Մ'հեր կ'բիրը զաղչիկ կը ջռբը [3])՝ կըսը՝

—Ա՛ղչի՝ իլի՛ քիչմ խուտ տու իմ ձիուն՝ թըղ ուտը։

Աղչիկ կըսը՝

— Քու ըռըմ տու՝ իս խուտ զանիմ ըռըմը ծէր՝ զնիմ քիւ ձիու յառաջ՝ թըղ ուտը։ Իմ ձեռ չխասնը՝ բանձր է։

Մ'հեր կըսը՝

— Զուզը՝ իմ ձին խուտ չուտը։

Մ'հեր կըսը՝ աշխարք չար ի դհա՝ իս մըչ աշխարքի չըմ ապրի։

---

1) Թաշկինակ։ 2) Քաւորի։ 3) Կ'վիրձէ։

*) Զատիկի պատմելով՝ այս անունը հետևեալ պատմական ծագումը ունի։ Մի շահ եկել է Վանայ վերայ կռուելու՝ բայց չէ կարողացել առնել և շարունակ եօթը տարի բանակը դրած պաշարել է։ այդ երկար ժամանակի ընթացքում շահի անկած հաղողի այգիները հասնում են՝ հաղողը քաղում՝ բայց պաշարուածները՝ ոչ միայն քաղց չեն զգում՝ այլ և ի դէմս զօրքի կճուճներով մածուն են թափում պարիսպներից դուրս։ Շահը՝ յոյսը կտրելով՝ հեռանում է։ Այստեղից առաջանում է Շահ-բաղ անունը։

ՀՍՍՀ-ՍՍՀ Ա.

ГОРОДСКОЙ ЛАЗАРЕТЪ
МОСК. АР[illegible]СК ОБЩ.

ԳԻՆՆ է 40 կոպէկ.